Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 21 (1971) ՇԱԲԱԹ, Յունիս 6,2020
VOLUME 40, NO. 21 (1971) SATURDAY JUNE 6, 2020

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Թրամփի Ամերիկան

Տանոլտ Թրամփի նախագահ ընտրութենէն ասդին, բոլորի աչքերուն առջեւ երկիրը կը կերպարանափոխուի՝ դժբախտաբար դէպի վատը: Թրամփ կը թերանայ իր պարտականութիւնները նուազագոյն չափով կատարելու մէջ եւ ընդհակառակը՝ տագնապները իրար կը յաջորդեն ու առաջնորդի յատկանիշներու բացակայութիւնը կը դառնայ ակնյայտ: Վերջին օրերու իրադարձութիւնները անգամ մը եւս եկան փաստելու որ, Տանոլտ Թրամփ չէ՛ այն անձը, որ ունակ է ղեկավարելու երկիրը, յատկապէս ճգնաժամային իրավիճակներու պարագային:

Աւելի քան շաբաթէ մը ի վեր երկիրը կ՛եռայ, ի տես Մինիափոլիսի մէջ ոստիկաններու կողմէ անմարդկային արարքին, որուն հերթական զոհը դարձաւ սեւամորթ ճորճ Ֆլոյտ: Նման երեւոյթները եզակի չեն ու կը շարունակեն կրկնուիլ Ամերիկայի գրեթէ բոլոր մեծ քաղաքներուն մէջ, երբ որոշ ոստիկաններ փոքրամասնութիւններու նկատմամբ կը գործադրեն բռնութիւններ, որոնք շատ յաճախ կ՛աւարտին մահուան ելքով: Նման դէպքերու միայն մէկ փոքր մասն է որ կ՛արժանանան մամուլի եւ ապա հանրային ուշադրութեան: Ճորճ Ֆլոյտի պարագային հակազդեցութիւնը եղաւ մեծ, քանի որ դէպքը տեղի կ՛ունենար օր-ցերեկով եւ նկարահանող սարքերու ներկայութեան:

Դէպքի նողկալի տեսարանները հեռատեսիլի ու ընկերային ցանցերու վրայ յայտնուելէն անմիջապէս ետք, Մինիափոլիսի մէջ ծայր առին բողոքի ցոյցեր: Խաղաղ ցուցարարներէն անկախ, փոքրաթիւ ծայրայեղ տարրեր, օգտագործելով առիթը դիմեցին անկարգութիւններու: Այրուեցաւ շրջանի ոստիկանատունը, բազմաթիւ վաճառատուներ ենթարկուեցան քանդումի եւ կողոպուտի՝ կրելով մեծ վնասներ: Նման տեսարաներ պարզուեցան այլ քաղաքներու մէջ եւս:

Ամերիկայի նախորդ նախագահներուն օրօք եւս տեղի ունեցած են դէպքեր, սակայն անոնց առաջին արձագանքը միշտ եղած է հանդարտութեան եւ համերաշխութեան կոչ ընել ժողովուրդին, կարեկցանք ցուցաբերելով տուժողներուն՝ փորձել մեղմացնել իրավիճակը: Նախագահ Թրամփ, որդեգրեց իր նախորդներուն հակառակ ընթացք: «Երբ սկսի կողոպուտը, կը սկսի կրակոցը», եղաւ իր առաջին խօսքը, սպառնալով ցուցարարներուն ու այդպիսով իւղ թափելով կրակին վրայ: Ապա, ան մեղադրեց տեղական իշխանութիւններուն, որ անոնք շատ

Շար.ը էջ 5

Դարձեալ Փակուելու Պարագային Կ՛ունենանք Տնտեսական Երկարաժամկէտ Ճգնաժամ. Փաշինեան

Հայաստանի մէջ, «Քորոնա» ժահրի բռնկումէն ի վեր, վերջին օրերուն արձանագրուած է մահերու եւ վարակուածներու «ցուցանշային» բարձր թիւ: Յունիս 1-ին հաստատուած է 517 նոր դէպք, արձանագրուած՝ 19 մահ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ ինք եւ իր ընտանիքի անդամները եւս վարակուած են, յայտարարեց, որ համաճարակի հետ կապուած իրավիճակը երթալով կը վատթարանայ:

«Ես ուզում եմ արձանագրել, որ մեր հիմնական պրոբլեմը հակահամաճարակային կանոնների պահպանումն է եւ այդ կանոնների պահպանման որակը, եւ մենք ունենք համոզուածութիւն, որ այդ կանոնների պահպանումը կը բերի կորոնավիրուսի թուերի անկման, նուազման, ընդհուպ մինչեւ զրոյացման»,- նշեց վարչապետը:

Ըստ անոր՝ Հայաստանի օրինապահութեան մթնոլորտը դեռ պատշաճ աստիճանի ու մակարդակի չէ հասած:

«Առողջապահութեան համակարգը մեր առաջ անընդհատ դնում է օր առաջ համընդհանուր սահմանափակումների գնալու խնդիր: Այդ հարցը պարէտատանը, գրեթէ, ամենօրեայ ռեժիմով քննարկւում է: Մենք սահմանափակումների շրջանը տեսել ենք: Տեսել ենք, որ այն բերում է գրեթէ աղէտալի սոցիալական ու տնտեսական հետեւանքների: Պետութեան հնարաւորութիւններն անսահմանափակ չեն, նորից փակուելու ընթացքում կարող ենք յայտնուել այնպիսի տնտեսական ճգնաժամի առաջ, որ երկար տարիներ չկարողանանք յաղթահարել»,- ըսաւ Փաշինեան:

Փաշինեան ելոյթ կ՛ունենայ վարչապետի բնակութեան վայրին առջեւ

«Կայծ» Երիտասարդականի Յայտարարութիւնը Ճորճ Ֆլոյտի Սպանութեան Կապակցութեամբ

Վերջին մի քանի օրերու ընթացքին Ամերիկան դարձեալ ականատես եղաւ ոստիկանութեան դաժանութիւններուն եւ ռասիզմի օրինակներու, որոնց պատճառաւ այս երկիրը կը տառապի դարեր շարունակ:

Ոստիկանական բռնութեան այս դատապարտելի գործողութիւնները յառաջացուցին բողոքներու մեծ ալիք ամբողջ երկրի տարածքին՝ ի պատասխան Ճորճ Ֆլոյտի սարսափելի մահուան՝ ոստիկանութեան չորս անդամներուն ձեռքով: Մենք կը հաւատանք, որ այս բողոքի գործողութիւնները պէտք է մնան խաղաղ եւ ոչ բռնի, որպէսզի պահպանեն «սեւ կեանքեր» շարժման իսկական նպատակները:

Որպէս ամերիկահայեր, մենք չենք կրնար լուռ մնալ, երբ մեր աֆրոամերիկեան համայնքի ընկերները շարունակաբար կ՛ենթարկուին, ոտնձգումներու, հետապնդումներու եւ ռասիստական ճնշումներու, որոնք տարածուած են ամերիկեան իրաւապահ համակարգէն ներս:

«Կայծ» երիտասարդական կազմակերպութիւնը կը պահանջէ, որ Մինըսոթա նահանգի համապատասխան մարմինները եւ պետական պաշտօնեաները մանրակրկիտ հետաքննեն Մինեափոլիսի չորս ոստիկաններու ձեռքի տակ Ճորճ Ֆլոյտի անարդար եւ ողբերգական մահը:

Մենք կ՛ողջունենք ոստիկան Տերիք Շոուվինի արագ ձերբակալութիւնը եւ կոչ կ՛ընենք անյապաղ հետաքննութիւն եւ դատաքննութիւն նախաձեռնել այդ օրը ներկայ միւս երեք ոստիկաններու նկատմամբ:

Մենք կոչ կ՛ընենք երկրի բոլոր իրաւապահ մարմիններուն եւ պետական պաշտօնեաներուն իրականացնելու ուժեղ քաղաքականութիւն եւ բարեփոխումներ՝ կանխելու համար հետագայ ցանկացած վայրագութիւններ եւ ցանկացած յանցագործութիւն ոստիկաններու կողմէ մեր համաքաղաքացիներու նկատմամբ:

Մեր մտքերն ու համակրանքը զոհուածներու ընտանիքներուն հետ են, եւ մենք կը յայտնենք մեր համերաշխութիւնը այս երկրի միւս հատուածներուն ու կը սգանք այս նեղ օրերը մեր ամերիկացի համաքաղաքացիներուն հետ:

«Կայծ» Երիտասարդական Կազմակերպութեան Վարչութիւն

Հրանդ Տինք Հիմնադրամի Հասցէին Մահուան Սպառնալիքներ Ուղարկելու Առընչութեամբ Երկու Անձ Ձերբակալուած է

Հրանդ Տինք հիմնադրամի էլեկտրոնային հասցէին մահուան սպառնալիքներ պարունակող նամակներ ուղարկելու առընչութեամբ երկու անձ ձերբակալուած է:

Կիրակի օր, Քանեա նահանգին մէջ յայտնաբերուած էր եւ Պոլիս տեղափոխուած, Մայիս 27-28-ին ուղարկուած նամակի հեղինակը: Մամուլով տեղեկութիւն տարածուած էր, թէ իբր ան այդ քայլին դիմած է ատրպէյճանցի սիրեցեալին ազդեցութեամբ: Թուրքիոյ Քրէական օրէնսգրքին համաձայն՝ անոր 3-էն մինչեւ 7,5 տարուայ ազատազրկում կը սպառնայ: «Ակօս» պարբերականի փոխանցումով՝ այսօր Պոլսոյ մէջ ձերբակալուած է հիմնադրամի հասցէին երկրորդ՝ Մայիս 31-ին սպառնալի նամակ ուղարկած անձը:

Յայտնի է, որ ան որոշ ժամանակ բնակած է ԱՄՆ եւ քանիցս յայտնուած է ոստիկանութեան ուշադրութեան կեդրոնը: Տինքի ընտանիքի փաստաբաններէն Ֆեթիյէ Ջեթինը «Պիանեթ» տեղեկատուական ցանցի հետ զրոյցի ընթացքին, նկատել տուած է, որ այդ նամակները փոխկապակցուած են եւ ունին նոյն բովանդակութիւնը, ինչ որ Հրանդ Տինքի սպանութենէն առաջ ստացուած սպառնալիքները: Ան ցաւով կ՛արձանագրէ, որ երկրի ղեկավարութեան հռետորաբանութիւնն ու գործածած ատելութեան խօսքը կը խրախուսէ նմանօրինակ յարձակումները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Վիրուսը՝ Որպէս Նախկիններու «Փրկօղակ»

ԱՐՍԷՆ ՕՀԱՆԵԱՆ

Զէ, նախկին իշխանութեան ներկայացուցիչներն ու նրանց համար ակտիվիզմով զբաղուողները ուղղուողը չեն: Եւ կորոնավիրուսի ճգնաժամը օր օրի ապացուցում է դա: Այս մարդիկ կորոնավիրուսին հաւասար խնդիրներ են փորձում ստեղծել՝ ռեւանշի իրենց մտադրութիւնը գերադասելով անգամ մարդկային կյանքերից:

Քաղաքական պայքարը դեռ մի կողմ, իւրաքանչիւրն էլ կարող է մղել այդպիսի պայքար: Բայց խնդիրն այլ է: Ուզէնք-չուզենք, դուր դա դա մեզ, թէ ոչ՝ բայց փաստ է, որ նախկիններն ունեն տեղեկատուական ամենամեծ ռեսուրսը:

Ընդ որում՝ ունեն բոլոր հնարաւոր տեղեկատուական միջոցները:

Եւ ի՞նչ են անում նրանք: Զբաղուած են ամենահակասական տեղեկութիւնները տարածելով, լուսաբանում են ցանկացած մէկի կատարեալ ցնդաբանութիւնները վիրուսի եւ դրա ընթացքի վերաբերեալ, շահարկում են ցանկացած իրադարձութիւն, եւ միայն կոյրը չի տեսնի, որ այդ ամէնի նպատակը հանրութեան շրջանում շփոթ առաջացնելն է: Ճիշտ է, իրենց մեղադրանքներից մէկն էլ այն է, թէ իշխանութիւնները չեն կարողանում ապահովել հանրութեան կարգապահութիւնը, բայց, չգիտես ինչու, չնկատելու են տալիս այն պարզ իրողութիւնը, որ շատ մարդիկ անկարգապահ են նաեւ իրենց մատուցած տեղեկատուութեան շնորհիւ: Տեղեկատուութիւն, որի արդիւնքում սովորական քաղաքացին պիտի չհաւատայ վիրուսի գոյութեանն ընդհանրապէս, ընկնի դաւադրապաշտութիւնների գիրկը, անգամ վարակուելու եւ հիւանդանոցում յայտնուելու պարագայում հրաժարուի բուժումից, իսկ ամենավատ ելքի դէպքում դա նոյնպէս «բարեյաջող» շահարկեն:

Ու ոչինչ, որ մարդկանց նման վարքի մղողներն իրականում իրենք լաւ էլ պաշտպանւում են վիրուսից: Բայց մարդիկ հոյ այդ մասին չգիտեն: Կարեւորը, որ մարդիկ անընդհատ կասկածի ու շփոթի մէջ լինեն:

Իսկ գուցէ նախկիններին հէնց դա էլ պէտ՞ք է: Ոչ միայն չօգնել կամ գոնէ լռել, այլ, հակառակը, նպաստել, որ իրավիճակը գնալով աւելի ու աւելի բարդանայ: Որպէսզի մարդկանց կեանքն ու առողջութիւնը շահարկելու հնարաւորութիւն ունենան՝ իրականում անտարբեր լինելով մարդկանց կեանքի եւ առողջութեան հանդէպ:

Որովհետեւ եթէ անտարբեր չլինէին, ապա չէին դարձնի դա ներքաղաքական պայքարի գործիք: Տեղեկատուական անդադար հոսքերով չէին մղի մարդկանց անկարգապահութեան եւ անուշադրութեան, առժամանակ դադար կը տային եւ իրենց քաղաքական պայքարը կը վերսկսէին այն ժամանակ, երբ վիրուսը նահանջեր:

Բայց դէ երբ վիրուսը նահանջի, խնդիրներն էլ կը սկսեն նուազել: Բա այդ ժամանակ ի՞նչ պիտի շահարկեն: Շահարկման թեմաները կը նուազեն: Իսկ հիմա լաւ է. թեմաները շատ են, ճգնաժամ է, իսկ այդտեղ իրենք իրենց զգում են ինչպէս ձուկը ջրում: Ուստի եւ իրենց տեղեկատուութեամբ ամէն կերպ մղում են մարդկանց դէպի վարակը, ամէն բան անում են, որ մարդիկ պակաս զգօն լինեն, վարակուեն, հետեւաբար եւ մահուան թուերն էլ շատանան, որովհետեւ ինչքան մեծ լինի մահացած անձանց թիւը, այնքան իրենք աւելի շատ շահարկումների առիթներ կը ստանան: Եւ ամենեւին չենք զարմանայ, որ նրանք ամէն առաւօտ ձեռքերը շփելով եւ երնեկ տալով են սպասում մահուան թուերին: Զ՞է որ դա հիմա իրենց ամենամեծ զէնքն է իշխանութեան դէմ պայքարում:

«Ի ԼՈՒՐ»

Բաքուն Ռազմական Յեղաշրջման Շեմին

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Ադրբեջանը սաստկացնում է ռազմատենչ հռետորաբանութիւնը, որ յատկապէս այդ երկրի պաշտպանական գերատեսչութեան շրջանակից, արտացոլուելով նաեւ պրոպագանդայի տարբեր հարթակներում: Նկատելի է, որ Բաքուի խիստ որոշակի շրջանակ բաւականին ինտենսիւ գեներացնում է ռազմական առաւելութեան եւ «վճռական հարուածի» հասարակական մտայնութիւն:

Բաքուն առանձնապէս երբեք աչքի չի ընկել խաղաղասիրական հռետորաբանութեամբ, իսկ ժամանակ առ ժամանակ էլ ուժգնացրել է պատերազմականը: Անկասկած, նպատակների մի մասը այդ դրուագների համատեքստում ընդհանուր է, սակայն կան թերեւս նաեւ իւրաքանչիւր ժամանակահատուածի բնորոշ առանձին, նոր նպատակներ ու մոտիւներ:

Ընդհանուր նպատակների այսպէս ասած կայուն շրջանակը հետեւեալն է: Նախ, ադրբեջանական հանրութեան «ինքնութեան» խնդիր: Ադրբեջանն իբրեւ պետութիւն այդ առումով կառուցուած է «ճահճի» վրայ եւ այդ երկրի իշխանութիւնը՝ Իլհամ Ալիեւի պաշտօնամուտից սկսած, չի գտել «ճահիճը» լցնելու առաւել յարմար եւ «հաւաստի» բան, քան հայերի հանդէպ ատելութիւնն ու ռազմական «յաղթանակի» սպասումը: Միւս կողմից, հասկանալի է, որ պարտուած այդ երկրում հազիւ թէ հնարաւոր լինի գտնել ինքնութեան այլընտրանք, քան ռեւանշը:

Միաժամանակ, կայ պարզապէս հասարակութեան կառավարման ընթացիկ խնդիր, եւ պատերազմական հռետորաբանութիւնը ներքին սպառման ապրանք է այդ աւելի կարճաժամկէտ տեսանկիւնից էլ: Միաժամանակ կայ ռազմական շանտաժի արտաքին էֆեկտ ստանալու խնդիրը, յատկապէս 2016-ից ու 2018-ից յետոյ Ադրբեջանի համար խորացած դիւանագիտական փակուղու պայմաններում: Իսկ կորոնավիրուսի հանգամանքը էլ աւելի է սրել խնդիրը երկարաժամկէտ առումով, քանի որ աշխարհակարգն այլեւս ոչ թէ Արեւմուտք-ռուսաստան, այլ ԱՄՆ-Չինաստան դիմակայութիւն-ձեւաչափի գերակայութեամբ է, ինչը Բաքուի համար այդքան էլ հաճելի նորութիւն չէ:

Ահա այդ հանգամանքը Ադրբեջանում առաջացնում է թերեւս պատերազմի հռետորաբանութեան նոր շարժառիթներ, կամ այսպէս ասած «հետկորոնավիրուսային» շարժառիթներ: Բաքուում ըստ ամենայնի դիտարկւում է «ռազմական յեղաշրջման» սցենար, որը հասունացնելու նպատակով գեներացվում է քաղաքական ղեկավարութեան հանդէպ պատերազմի «ներքին պահանջ»: Ադրբեջանի նախագահ Ալիեւը կամ պէտք է բաւարարի այդ պահանջը՝ իսկ դա նշանակում է ստանձնել պատասխանատուութիւն ռեգիոնալ աղէտի համար, կամ ռազմական վերնախաւը կը հեռացնի նրան՝ «յաղթանակի անընդունակ գերագոյն գլխաւորին»:

Այդպիսով, Ալիեւի համար «ադրբեջանական ինքնութեան» իր իսկ հեղինակած բանաձեւը՝ թէեւ հնարաւոր է, որ դա պարզապէս ներդրուած բանաձեւ էր, կ՚աշխատի իր դէմ: Ներդրուած բանաձեւ, որով Ադրբեջանի վրայ երկարաժամկէտ ազդեցութեան հարցեր կարող էր լուծել Անկարան: Բաքուի ղեկավարութեան ռազմական թեւում մեծ է հէնց թուրքական ազդեցութիւնը: Այստեղ ի հարկէ ռուսական հնարաւոր հնարքին հակազդելու խնդիրն է, քանի որ ամիսներ առաջ Բաքուում բաւականին նշմարուեց ռուսական սցենարը՝ իշխանութեան փոխանցում Մեհրիբան Ալիեւային, որը դիտարկւում էր իբրեւ ռեգիոնալ թէկուզ յարաբերական կայունութեան համար ժամանակ եւ տարածութիւն շահելու հնարաւորութիւն:

«Պատերազմի ներքին պահանջի» գեներացիան լուծում է դրա առաւել երկարաժամկէտ արգելակման խնդիր: Կարճաժամկէտ իմաստով Ալիեւի համար դա երկու՝ ռուսական եւ թուրքական սցենարների հաւասարակշռման եւ դրա վրայ իրադրութիւնը կառավարելու հնարաւորութիւն է, բայց որքա՞ն կը կարողանայ Ալիեւը խաղալ այդ երկու լարի վրայ:

Հայաստանը ռազմական եւ քաղաքական ռեսուրսներով աչալրջորէն պէտք է լուծի մի խնդիր, որ Ալիեւը լարի վրայից ընկնի, կամ նրան գցեն ոչ այս կողմ:

«ԼՐԱԳԻՐ»

Ցաւալի Ցուցանիշ. Այս Պահին Հայաստանի Գերխնդիրը

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Յունիսի 2-ին Հայաստանում արձանագրուել է կորոնավիրուսի վարակի տարածման ռեկորդային բարձր օրական ցուցանիշ՝ 517 վարակակիր: Բարձր է նաեւ մահացածների օրական ցուցանիշը՝ 20 մարդ: Արդեո՞ք դա նշանակում է, որ Հայաստանում արդիւնաւէտ չէ հակահամաճարակային քաղաքականութիւնը, թ՞է հանրութիւնն է ցուցաբերում անձնական ցածր պատասխանատուութիւն: Այն, որ կան այդպիսի հանրային շերտեր եւ դրանք քիչ չեն, կասկածից վեր է: Բայց անհնար է պատկերացնել, որ հանրութիւնը մէկ մարդու նման պէտք է ցուցաբերի հակահամաճարակային պատասխանատուութիւն: Ըստ այդմ, խնդիրը լոկ այս դաշտում տեսնելը կը նշանակի իրականում փակել տեսադաշտն ու անել սխալ եզրայանգումներ, եթէ ի հարկէ չկայ պատասխանատուութիւնը հէնց միայն հանրութեան վրայ դնելու, կամ առաւելապէս հանրութեան վրայ թողնելու խնդիր:

Միեւնոյն ժամանակ, երբ Հայաստանում Մայիսի 4-ից աստիճանաբար թուլացւում էին սահմանափակումները, օրական վարակի դինամիկան ամենեւին նուազող չէր, այլ հակառակը՝ աճող էր: Ըստ այդմ կասկածից վեր է, որ սահմանափակումները թուլացնելը բերելու էր աւելի մեծ աճի: Եթէ կարանտինի ընթացքում օրական թիւն աճել է, իսկ առողջապահութեան նախարարն էլ հէնց այդ ընթացքում յայտարարել, որ վարակը դուրս է եկել վերահսկողութիւնից, ուրեմն սահմանափակումները թուլացնելը աներկբայ բերելու էր վիճակագրութեան աճի՝ որքան էլ քաղաքացիներին յղուէր անվտանգութեան կամ պաշտպանութեան կանոնները պահելու յորդոր:

Ըստ այդմ, այն, ինչ տեղի է ունենում այժմ, թերեւս պէտք է լինէր սպասելի, կանխատեսելի շրջանակում, հետեւաբար պէտք է լինէին դրան արձագանքելու պատրաստ քայլեր: Քայլեր արւում են, ի հարկէ, եւ հարցն արդիւնաւէտութիւնն է, օրինակ բուժման գործընթացի, մահերի կանխարգելման, միաժամանակ հանրութեան հետ աշխատանքի եւ անվտանգութեան կանոնների վերահսկման: Որքան էլ դժգոհութիւն լինի հանրային վարքագծից, այդուհանդերձ վիզուալ առումով

Շար.ը էջ 15

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային Ժողովը Չեղեալ Համարեց Սահմանադրական Հանրաքուէն

Ազգային Ժողովը ընդունեց «Հանրաքուէյի մասին» սահմանադրական օրէնքի փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացուած օրէնքներու նախագիծերու փաթեթը առաջին ընթերցումով ընդունելու մասին հարցը: Կողմ քուէարկեց 83, դէմ՝ 16 պատգամաւոր: Բարգաւաճ Հայաստան Կուսակցութիւն խմբակցութիւնը դէմ քուարկեց այս նախագիծին:

Պատգամաւոր Նաիրա Զոհրապեան ըսաւ, որ խորհրդարանը կողմ քուէարկեց հակասահմանադրական օրէնքին, Ազգային Ժողովի լիազօրութիւնները սահմանուած են ՀՀ Սահմանադրութեամբ, եւ Սահմանադրութեան 208 յօդուածի հանրաքուէի մասով միայն մէկ դրոյթ կայ, հանրաքուէն յետաձգելու: «Հանրաքուէն չեղարկելու դրոյթ չկայ, նոյն տրամաբանութեամբ Ազգային Ժողովը կարող է հիմա քուէարկել ու չեղարկել Յունիս ամիսը կամ Նոր տարին: Այդ պատճառով, մենք յայտնելով յստակ քաղաքական դիրքորոշում, քուէարկել ենք դէմ»,- ըսաւ Զոհրապեան:

«Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց ըսաւ, որ բոլոր օրէնքները պէտք է միտուած ըլլան ծառայելու ՀՀ քաղաքացիին եւ անոնց անհատական ու հանրային անվտանգութեան: «Այս նախագիծն այն մասին էր, որ համավարակով պայմանաւորուած այս իրավիճակում հնարաւոր չէ պարզապէս անցկացնել հանրաքուէ եւ վտանգել մեր քաղաքացիների կեանքը: Հետեւաբար, անհրաժեշտութիւն է առաջացել չեղարկել հանրաքուէն»,- նշեց Մակունցը: Լիլիթ Մակունց աւելցուց, որ «Եթէ մտավախութիւնն այն է, որ այս նախագծից յետոյ մենք ձեռնարկելու ենք քայլեր՝ այնուամենայնիւ գործող Սահմանադրական դատարանը համապատասխանեցնելու 2015 թուականի Սահմանադրութեանը, ապա պէտք է ասեմ՝ այո, մենք դա անելու ենք»:

Հոկտեմբեր 27-ի Հարցով Նախկին Դատաւորի Քրէական Հետապնդումը Կասեցուած է

51 հազար տոլար կաշառք ստանալուն համար մեղադրուող նախկին դատաւոր Սամուէլ Ուզունեանի վերաբերեալ քրէական գործը կասեցուած է, մեղադրեալին գտնուելուն վայրը յայտնի չըլլալու հիմքով: «Ազատութեան» հարցումին ի պատասխան՝ այս գործը քննած Յատուկ քննչական ծառայութեան խօսնակ՝ Մարինա Օհանջանեան ըսաւ, որ այս գործին միացած էր նաեւ Ուզունեանին Հայաստանը լքելու գործը, որմով կը քննուէր, թէ որու մեղքն էր ի վերջոյ, որ նախկին դատաւորը լքեց Հայաստանը:

Նախկին Դատաւոր Սամուէլ Ուզունեան

Օհանջանեան նաեւ ըսաւ, որ ոստիկանութեան ծառայողներու արարքին հնարաւոր կ՛ըլլայ գնահատական տալ, հետախուզման մէջ գտնուող մեղադրեալի յայտնաբերուելէն յետոյ:

Անցեալ Դեկտեմբերին, յայտարարուեցաւ նախկին դատաւոր Ուզունեանին առնչուող քրէական գործին մասին, մինչեւ նախաքննական մարմինը հասցնէ Ուզունեանին մեղադրեալ ներգրաւել, ան լքեց Հայաստանը: Օդակայանը, Ուզունեանին պատկանող ճամպրուկին մէջ փամփուշտ յայտնաբերած էին : Անոր փախուստէն յետոյ քրէական գործ յարուցուեցաւ պաշտօնէական անփութութեան համար:

Ուզունեանը Հոկտեմբեր 27-ի գործը քննած դատաւորն է: Քրէական գործը առնչուած է այն ժամանակամիջոցին, երբ Ուզունեան կը ղեկավարէր Երեւանի Աւան եւ Նոր Նորք վարչական շրջաններու ընդհանուր իրաւասութեան դատարանը: Ըստ Դատախազութեան՝ Ուզունեան 2007-ին, ապա եւ 2014-ին քաղաքացիներէն պահանջած է եւ տարբեր ժամանակահատուածներով ստացած է առանձնապէս խոշոր չափերով կաշառք, դէպքի մը՝ 13 հազար, ուրիշ դէպքի մը՝ 38 հազար տոլար:

Արգիլուած է Հայկական Բոլոր Օդանաւային Ընկերութիւններու Թռիչքները Դէպի Եւրոպական Միութեան Երկիրները

Եւրոպական յանձնաժողովը հրապարակած է այն կազմակերպութիւններու ցուցակը, որոնք իրաւունք չունին թռիչքներ կատարել Եւրոպական միութեան տարածքէն ներս: Սեւ ցուցակին մէջ ընդգրկուած են Հայաստանի քաղաքային օդանաւային երթեւեկութեան կոմիտէի կողմէ որակաւորուած բոլոր օդանաւային ընկերութիւնները՝ Aircompany Armenia, Armenia Airways, Armenian Helicopters, Atlantis Armenian Airlines, Atlantis European Airways, Mars Avia, Skyball:

Յիշեցնենք, որ աւելի վաղ, Եպրոպական օդանաւային երթեւեկութեան անվտանգութեան գործակալութիւնը, խնդիրներ յայտնաբերած էր Հայաստանի քաղաքային օդանաւային երթեւեկութեան կոմիտէէն ներս:

www.massispost.com

Գլխաւոր Դատախազ. Հայաստանի Մէջ Գործած է Պետական Հովանաւորչութեամբ Յանցաւոր Ծրագիր

Գլխաւոր դատախազ՝ Արթուր Դաւթեան Ազգային Ժողովին մէջ ներկայացուց դատախազութեան տարեկան հաշուետուութիւնը: Ան անդրադարձաւ քորուփցիոն յանցագործութիւններու բացայայտումին:

«Այսօր նախաքննական տարբեր մարմինների վարոյթում քննուում են մեր երկրի համար նախադէպը չունեցող ծաւալներու յանցագործութեան վերաբերեալ քրէական գործեր, որոնցով քննութեան առարկայ են առանց չափազանցութեան 10 եւ աւելի տարիների ընթացքում կազմակերպուած, յստակ ցուցակագրական գործելակերպով տասնեակ տնտեսվարող հաստատութիւններու պաշտօնական ներգրաւմամբ շղթայական, պետական հովանաւորչութեամբ իրականացուած տնտեսական գործունէութիւն, որի արդիւնքում հարիւրաւոր միլիոնաւոր տոլարների հասնող յանցաւոր եկամուտներ են առաջացուել՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, տարբեր երկրների դրամատնային ու ֆինանսական համակարգերի օգտագործմամբ՝ փորձ անելով թաքցնել դրանց իրական ծագումն ու աղբիւրը: Դրանց որոշ մասով արդէն իսկ առկայ են տասնեակ անձանց նկատմամբ քրէական հետապնդումներ: Ամենօրեայ բարդ ու ծաւալուն աշխատանքով փաստական տուեալներ են ձեռք բերուում յանցաւոր ցուցակի բոլոր օղակները, հանգամանքները հիմնաւորելու վերաբերեալ՝ գործի դնելով իրաւական ողջ գործիքակազմը՝ պետութեանը պատճառուած վնասները վերականգնելու ուղղութեամբ»,- ըսաւ Դաւթեան:

ՀՀ Գլխաւոր դատախազ՝ Արթուր Դաւթեան

Գլխաւոր դատախազի խօսքով՝ այդ նպատակով միայն ներկայ պահուն վերոնշեալ արժէքը գերազանցող գոյք արգելադրուած է : Յառաջիկային, եւս նոր բացայայտումներուն վերաբերեալ տեղեկատուութիւն կը տրամադրուի հանրութեան, աւելցուց Դաւթեան:

Եւրոպական Դատարանը Կարծիք Յայտնեց Ռոպերթ Քոչարեանը Մեղսագրող Յօդուածին Մասին

Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը ներկայացուցած է գրաւոր խորհրդատուական կարծիք՝ ՀՀ Քրէական օրէնսգրքի 300.1 յօդուածի վերաբերեալ, Հայաստանի Սահմանադրական դատարանի դիմումի հիման վրայ:

Եւրոպական դատարանը չէ պատասխանած Սահմանադրական դատարանի չորս հարցերէն երկուքին: Մասնաւորապէս, դատաւորները չեն կրցած գտնել որեւէ ուղղակի կապ հարցերուն եւ ընթացիկ վարոյթներուն միջեւ, որոնք յարուցուած են նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանին դէմ, 2008-ին սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքով:

Ըստ որոշումին՝ այդպիսի դրոյթ, որ կ՛օգտագործէ «այլ օրէնքի յղման» գործադրութիւնը, արարքը կամ անփութութիւնը քրէականացնելու ժամանակ, պէտք է հնարաւորութիւն տալ անձերուն կանխատեսել, թէ որ արարքը կրնայ իրենց քրէօրէն պատասխանատու դարձնել:

Դիտարկելով չորրորդ հարցը, որ կը վերաբերէր քրէական օրէնքի յետադարձ կիրառման արգելքի սկզբունքին, Եւրոպական դատարանը համարած է, որ գնահատականները պէտք է տրուին, հաշուի առնելով գործի առանձնայատուկ հանգամանքները, ոչ թէ վերացական:

Ըստ էութեան՝ որոշումի առնելը թողած է հայաստանեան դատարաններուն:

Յիշեցնենք, որ Հայաստանի Սահմանադրական դատարանը ՄԻԵԴ-ին ուղղած էր չորս հարց՝ խնդրելով զանոնք քննարկել Եւրոպական համաձայնագրի 7-րդ յօդուածի (Պատիժ՝ բացառապէս օրէնքի հիման վրայ) ծիրէն ներս. քանի որ Քրէական օրէնսգրքի 300.1 յօդուածը ամրագրուած է 2009-ին, իսկ Ռոպերթ Քոչարեանին մեղադրանք առաջադրուած է 2008-ի իրադարձութիւններու համար:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի «Միասին Յաղթահարենք Համաճարակը» Արշաւը Հաւաքած է Շուրջ 360,000 ԱՄՆ Տոլար

«Հայաստան» համահայկական հիմնադրամը «Միասին յաղթահարենք համաճարակը» դրամահաւաք արշաւի ծիրէն ներս, այս պահուն, հաւաքած է շուրջ 360,000 ԱՄՆ տոլար գումար, որմէ 230 հազարը արդէն ուղղուած է համաճարակի դէմ պայքարին: Այս մասին Ֆէյսպուքի իր էջին վրայ գրած է հիմնադրամի ղեկավար՝ Հայկակ Արշամեանը:

«Խորին շնորհակալութիւն մեր 700 անհատ նուիրատուներին եւ կազմակերպութիւններին, ինչպէս նաեւ աշխարհասփիւռ 15 հայկական համայնքներին՝ վստահութեան եւ շարունակական աջակցութեան համար: Համահայկական շարունակական աջակցութեանը կարող էք մասնակցել մեր առցանց հարթակում՝ www.himnadram.org», *նշած է Արշամեան:*

ԼՈՒՐԵՐ

Արայիկ Յարութիւնեան կը Հակադարձէ Ալիեւին. «Ուժի Լեզուով Երբեք Չհամարձակիք Խօսիլ Մեզի Հետ»

Արայիկ Յարութիւնեան նախագահական ընտրութիւններուն իր գլխաւոր մրցակիցը՝ Մասիս Մայիլեանի հետ

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման ժամանակ հակադարձեց ատրպէյճանական պետութեան ղեկավարի նախօրէին կատարած յայտարարութիւններուն՝ ըսելով. - «Իլհամ Ալիեւը հերթական իր յայտարարութիւններն է կատարել, ի հարկէ, չեմ ուզում վիրաւորել, բայց դա վայել քաղաքական գործչի յայտարարութիւն էլ չի եղել, մանաւանդ այս յայտարարութիւնը՝ «աշխարհում ուժի գործօնը առաջնային ծրագիր է մղւում»: Այսինքն՝ ուժի միջոցով հարցի լուծման ճանապա՞րհն ես ընտրել, պարոն Ալիեւ: Մենք պատրաստ ենք: Պատրաստ ենք, եւ նաեւ ուզում եմ վստահեցնել ձեզ, որ արդիւնքները մեզ համար պարզ է՝ այն, ինչ ունեցել էք 94 թուականին, կ՛ունենաք նաեւ այսօր: Մեզ հետ ուժի լեզուով չփորձէք երբեւէ խօսել»:

«Ուժի լեզուով երբեւէ չհամարձակուէք խօսել մեզ հետ: Մենք պատրաստ ենք խաղաղ ճանապարհով, բանակցութեան միջոցով հարցի խաղաղ, տրամաբանական լուծմանը, եւ այն յայտարարութիւնը, որը դու արել ես՝ փուլային, որ միայն այդ տարբերակն է, ի հարկէ փուլային կարող է լուծուել, բայց փուլային լուծումը մի տարբերակով՝ առաջին հերթին՝ ինքնորոշման իրաւունքի ճանաչում, երկրորդ հերթին՝ անվտանգութեան մեր երաշխիքների ընդունում, որից յետոյ արդէն՝ բանակցութիւններ: Այլ տարբերակ չի լինելու», - շեշտեց Արցախի նախագահը:

Մասիս Մայիլեանը՝ Արցախի Արտաքին Գործոց Նախարար, Սամուէլ Պապայեանը՝ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան նախագահական ընտրութիւններուն իր գլխաւոր մրցակիցը՝ Մասիս Մայիլեանը վերստին նշանակած է արտաքին գործոց նախարար: Այդ մասին Յարութիւնեան յայտնեց Մայիս 29-ի ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման ժամանակ:

Արցախի նախագահը տեղեկացուց նաեւ, որ նախօրէին Երեւանի մէջ Սամուէլ Պապայեանի հետ հանդիպման ի արդիւնք, վերջնական որոշում առնուած է Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախկին նախարար, Պաշտպանութեան բանակի նախկին հրամանատարը ԼՂ Անվտանգութեան խորհրդի քարտուղար նշանակելու մասին:

Արայիկ Յարութիւնեան այլ նշանակումներ եւս կատարած է, անոնց կարգին՝ Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէն նշանակած է Կամօ Աղաճանեանը:

Արայիկ Յարութիւնեան, իր գլխաւորած քաղաքական ուժի անունով, եւ «Միասնական հայրենիք» կուսակցութեան նախագահ՝ Սամուէլ Պապայեանը Մայիս 25-ին համագործակցութեան յուշագիր ստորագրած են:

Փաշինեանի եւ Փութինի Միջեւ Հեռախօսազրոյց Կայացած է

Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան

Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութին շնորհաւորած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը ծննդեան տարեդարձի կապակցութեամբ: Այսօր տեղի ունեցած հեռախօսազրոյցի ընթացքին Փութինը քաջառողջութիւն եւ յաջողութիւն մաղթած է Փաշինեանին, ինչպէս նաեւ մաղթած է շուտափոյթ ապաքինում իրեն եւ իր ընտանիքի անդամներուն, կը հաղորդէ Հայաստանի վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութիւնը:

Հեռախօսազրոյցի ընթացքին Փաշինեան եւ Փութինը մտքեր փոխանակած են «Քորոնա» ժահրի համաճարակի հետ կապուած իրավիճակին եւ հետագայ հնարաւոր զարգացումներուն շուրջ: Այս թեմայի շուրջ անոնք քննարկած են երկու երկիրներու առողջապահութեան նախարարութիւններուն միջեւ համագործակցութեան հարցերը: Վլատիմիր Փութինը ընդգծած է համաճարակի դէմ պայքարին Հայաստանին աջակցելու Ռուսաստանի պատրաստակամութիւնը:

Հայաստանի վարչապետը եւ Ռուսաստանի նախագահը անդրադարձած են նաեւ Հայրենական Մեծ պատերազմի Յաղթանակի 75-ամեակին կապակցութեամբ այս տարուայ Յունիս 24-ին Մոսկուայի մէջ կայանալիք շքերթին: Փաշինեան շնորհակալութիւն յայտնած է այդ առիթով օրեր առաջ ստացած հրաւէրին համար: Ան յոյսով է, որ մինչ այդ ապաքինուած կ՛ըլլայ եւ կը կարողանայ մասնակցիլ Յաղթանակի 75-ամեայ տարեդարձի կապակցութեամբ կայանալիք բոլոր միջոցառումներուն:

Հայաստանի վարչապետը այսօր դարձաւ 45 տարեկան: Վլատիմիր Փութինը նաեւ շնորհաւորական ուղերձ յղած է Նիկոլ Փաշինեանին:

Վարչապետը այսօր առաւօտեան ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակումով յայտնեց, որ ինքը եւ ամբողջ ընտանիքը վարակուած են «Քորոնա» ժահրով, հետազօտութեան արդիւնքը դրական է:

ԱՄՆ-ը Հաւատարիմ կը Մնայ Ղարաբաղեան Խաղաղ Կարգաւորումին. Փոմփէօ

Միացեալ Նահանգները, որպէս ԵԱՀԿ (Եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւն) Մինսքի խումբի համանախագահող երկիր կը շարունակէ հաւատարիմ մնալ ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորումին: Այս մասին յայտարարած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար՝ Մայք Փոմփէօն Ատրպէյճանի մէջ եւս Մայիս 28-ին նշուող Հանրապետութեան օրուայ առթիւ իր շնորհաւորական ուղերձին մէջ:

Ուղերձին մէջ մասնաւորապէս ըսուած էգ - «Թէեւ COVID-19-ը աշխարհին բերած է լրջագոյն մարտահրաւէրներ, ես վստահ եմ, որ Ատրպէյճանի ժողովուրդը զայն կը յաղթահարէ արժանապատուութեամբ եւ վճռականօրէն: Միացեալ Նահանգները կ՛աջակցի ձեզի եւ կը սատարէ Ատրպէյճանի իշխանութեան ու անկախութեան»:

ՄՄՆ արտաքին գործոց նախարար՝ Մայք Փոմփէօ

Ամերիկեան դիւանագիտական գերատեսչութեան ղեկավարը նաեւ աւելցուցած է, որ «Միացեալ Նահանգներն ու Ատրպէյճանը ուս ուսի տուած կ՛աշխատին խաղաղութիւն հաստատելու Աֆղանիստանի մէջ եւ համատեղ ջանքերով ամրապնդելու Եւրոպայի ուժեղ անվտանգութիւնը»:

Հայ Զինծառայողները Կը Մեկնին Մոսկուա Մասնակցելու Զօրահանդէսին

Հայկական բանակի 75 զինծառայողներ կը մեկնին Մոսկուա մասնակցելու Երկրորդ համաշխարհային պատերազմի 75-ամեայ յաղթանակին նուիրուած զօրահանդէսին, «Ազատութեան» ըսած է Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան խօսնակ՝ Շուշան Ստեփանեան:

Շարասիւնը, ըստ Ստեփանեանի, կը ծածանի պատերազմի եռակի շքանշանակիր Թամանեանական բաժանմունքի դրոշն ու Հայաստանի եռագոյնը: Շքերթին մասնակցելու հրաւէր ստացած է նաեւ պաշտպանութեան նախարարը, վերջինիս մասնակցութեան մասին առայժմ չէ հաղորդուած:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Յունիս 1-ի Ռուսաստանի Դաշնութեան նախագահ՝ Փութինի հետ հեռախօսազրոյցի ընթացքին, յուսացած է, որ մինչ այդ ապաքինուած կ՛ըլլայ «Քորոնա» ժահրէն եւ կը կարողանայ անձամբ մասնակցիլ միջոցառման:

ՀՀ եւ Արցախի Ղեկավարները Յարգանքի Տուրք Մատուցեցին Սարդարապատի Ճակատամարտի Հերոսներու Յիշատակին

Հայաստանի եւ Արցախի ղեկավարութիւնը եւ հոգեւոր դասը յարգանքի տուրք կը մատուցեն Սարդարապատի ճակատամարտի հերոսներուն

Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան բարձրագոյն ղեկավարութիւնը եւ հոգեւոր դասը յարգանքի տուրք մատուցեցին Սարդարապատի ճակատամարտի հերոսներու յիշատակին: «Արմէնփրէս»-ի փոխանցումով՝ Հանրապետութեան օրուան եւ 1918 թուականի մայիսեան հերոսամարտին նուիրուած պաշտօնական միջոցառումին մասնակցեցան Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Արմէն Սարգսեանը, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանը, Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն եւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեանը:

Պետական այրերը նախ ծաղկեպսակներ տեղադրեցին Սարդարապատի յուշահամալիրի մօտ, ապա յարգանքի տուրքի մատուցման արարողութիւն ուղեկցուեցաւ Տէրունական աղօթքով:

«Քորոնա» ժահրի համավարակով պայմանաւորուած, այս տարի Մայիս 28-ին արգիլուած էր քաղաքացիներու մուտքը Սարդարապատի յուշահամալիր:

Թրամփի Ամերիկան

Շարունակուած էջ 1-էն

մեղմ կը գտնուին բողոքողներուն հետ եւ պէտք է «տիրապետեն փողոցին»: Բռնի ուժով ցրուեց Սպիտակ Տան առջեւ հաւաքուած խաղաղ ցուցարարները ու վերջաւորութեան սպառնաց բանակը մտցնել քաղաքներ, քայլ մը որ պատմութեան ընթացքին պատահած է հազուագիւտ պարագաներուն:

Թրամփի իւրաքանչիւր գրգռիչ յայտարարութենէն ետք ցոյցերը ստացան աւելի մեծ տարողութիւն, տարածուելով երկրի մէկ ափէն միւս ափը, ընդգրկելով ամէն ազգի, ցեղի եւ կրօնքի պատկանող երիտասարդ տղաք ու աղջիկներ: Ցոյցեր տեղի ունեցան նաեւ Եւրոպական բազմաթիւ մայրաքաղաքներու մէջ, դատապարտելով Ամերիկացի ոստիկաններու բռնարարքները:

Այս բոլոր տեսարաններուն պատճառաւ, Ամերիկան կորսնցուց բարոյական իրաւունքը, այլ երկիրներուն դասեր տալու եւ ազատութիւններու մասին խօսելու առումով: Այսուհետեւ, ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը իրաւասու չէ պաշտպանելու Հոնք Քոնկի, Մոսկուայի եւ կամ Թեհրանի հրապարակներուն վրայ բողոքողներու իրաւունքները, ոչ թէ անոր համար որ, անոնց պահանջները արդար չեն, այլ այն պատճառաւ, որ Թրամփի Ամերիկան ձախողած եւ հեղինակազրկուած է աշխարհի աչքին:

Ձախողումներու շարքին է նաեւ համավարակի նկատմամբ անտարբերութիւնը, անգիտանալը եւ նախապատրաստական քայլերու բացակայութիւնը, որոնց պատճառաւ Թրամփի Ամերիկան մահացածներու թիւով աշխարհի մէջ կը գրաւէ առաջին դիրքը: Իսկ երբ անցեալ շաբաթ այդ թիւը հասաւ 100 հազարի, երկրի ղեկավարը զլացաւ անգամ ցաւակցական խօսք ուղղելու ժողովուրդին:

Թրամփի Ամերիկային մէջ ձախողումներու շարքը շատ երկար է եւ կարելի չէ բոլորը թուարկել: Ամէնօրեայ սկանտալները, օրէնքներու ոտնահարումը, բռնութեան քաջալերումը, ցեղային խտրականութեան հանդէպ հանդուրժող վերաբերմունքը, օրինապաշտ բարձրաստիճան պաշտօնեաներու հեռացումը, փտախտը կը կազմեն Թրամփի վարչակազմի գլխաւոր յատկանիշները:

Միակ բանը, որուն համար Թրամփ կրնար որոշ չափով արդարանալ՝ տնտեսութիւնն էր, որ ան ժառանգ ստացած էր իր նախորդէն եւ կարողացած պահել: Այժմ այդ ալ քայքայուած է եւ 40 միլիոն ամերիկացիներ մատնուած են անգործութեան:

Ամերիկայի հեղինակազրկումը սկսաւ այն օրէն երբ Թրամփ անակնկալօրէն ընտրուեցաւ նախագահ: Անցնող երեք ու կէս տարիները եկան փաստելու որ, Թրամփի Ամերիկան ձախող փորձարկութիւն մըն էր, որ պէտք է հասնի իր աւարտին՝ որքան շուտ այդքան լաւ:

«ՄԱՍԻՍ»

«ԱՄՆ-ի Կողմէ Ֆինանսաւորուող Կայքը Հայաստանի Մէջ Ապատեղեկատուութիւն կը Տարածէ Վարակի Մասին

«Միացեալ Նահանգներու կողմէ ֆինանսաւորուող կայքը Հայաստանի մէջ ապատեղեկատուութիւն կը տարածէ COVID-19-ի մասին», - բրիտանական openDemocracy-ն այսպէս վերնագրած է այսօրուայ հրապարակած հետաքննական յօդուածը:

Խօսքը, ըստ այս աղբիւրին, Medmedia.am կայքի մասին է, որ գործարկուած է Թաւշեայ յեղափոխութենէն յետոյ «Երիտասարդ բժիշկներու հայկական միութիւն» հասարակական կազմակերպութեան կողմէ, որու ղեկավարն է միգաբան Գէորգ Գրիգորեան:

Medmedia-ն, ըստ հրապարակութեան, հակասական առողջապահական կայք մըն է, որ կը տարածէ «աներեւակայելի վտանգաւոր» ապատեղեկատուութիւն «Քորոնա» ժահրի մասին: Կայքը ստեղծուած է Ժողովրդավարութեան յանձնաժողովի փոքր դրամաշնորհներու ծրագիրով տրամադրուած գումարով, որ շնորհուած է անցեալ տարի Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանատան կողմէն: Ժողովրդավարութեան խթանման ուղղուած այս գումարը տարեկան մինչեւ 50 հազար տոլար է:

«Ամենատարածուած նիւթը սխալ տեղեկատուութիւն մը կը ներկայացնէր, որ դիահերձարաններէն մէկը առաջարկած է 100 հազար դրամ (205 տոլար) մահացած հիւանդի հարազատներուն, իրենց ստորագրութեան դիմաց փաստաթուղթի մը, ուր ըսուած է, որ մահի պատճառը COVID-19-ն է: Վերջերս հրապարակուած այլ յօդուածներով COVID-19-ը ներկայացուած է որպէս «կեղծ համավարակ», - նշուած է յօդուածին մէջ:

Կայքին մէջ կայ նաեւ հակապատուաստի արշաւ. կան պնդումներ, որ այժմ մշակման փուլը գտնուող պատուաստները իրականութեան մէջ կենսաբանական զէնք են:

«Երբ որ լրատուամիջոցը տարածում էր, որ մարդկանց սկսելու են չիփեր տեղադրել կամ մարդկանց հարազատներից փորձում են գումար վերցնել, որպէսզի մահը «Քորոնա» ժահրի անուան տակ գրանցեն, սկզբում ես մտածում էի, որ մարդիկ դրան լուրջ չեն վերաբերուում, բայց նմանատիպ լուրերի պատճառով, մարդիկ սկսել են հաւատալ այդ լուրերին: Դա լուրջ խանգարում է համակարգի աշխատանքին, քանի որ մարդիկ սկսել են չհաւատալ ժահրի գոյութեանը, եւ իրենց վարքագծում թոյլ են տալիս քայլեր, որը մեծ հաշուով կարող է նաեւ տարածման պատճառներից մէկը լինել»,- ըսաւ առողջապահութեան նախարարի մամլոյ խօսնակ Ալինա Նիկողոսեան:

Ապատեղեկատուութեան հարցերու փորձագէտ Քլեր Ուորտլը openDemocracy-ի հրապարակութեան մէջ ընդգծած է. «Ոչ մէկ արդարացում կայ մասնագիտական «լրատուական կայքի» համար, որ ան նման տեսակի տեսութիւններ առաջ մղէ [...] Աւելի հաւանական է, որ մարդիկ հաւատան անոր եւ ապա կիսուին ուրիշներու հետ, քանի որ անոնք կը հաւատային, որ այն ստուգուած է «պաշտօնական աղբիւրի» կողմէն»:

Հայաստանի Եւրոպական Միութեան պատուիրակութիւնը openDemocracy-ին ըսած է, որ գրեթէ 10 հազար եւրօ մէկ այլ Հասարակական Կազմակերպութեան կողմէ «ենթաշնորհուած» է երիտասարդ բժիշկներու հայկական միութեան:

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանատունը «Ազատութեան» փոխանցեց, որ միութեան տրամադրած դրամաշնորհը նախատեսուած էր նախագիծի մը համար, որ կը բարձրացնէ թափանցիկութիւնը, հաշուետուութիւնը եւ կը նուազեցնէ քոռուփցիայի ռիսկերը վտանգները:

Պուլկարիայէն Օգնութիւն Հայաստանին

Մայիսին Պուլկարիոյ կառավարութիւնը որոշում կայացուցած էր Հայաստանին «Քորոնա» ժահրի դէմ պայքարին աջակցելու համար յատկացնել մարդասիրական օգնութիւն՝ բժշկական պարագաներու տեսքով:

3 Յունիսին Պուլկարիոյ կառավարութեան անունով Հայաստանի մէջ Պուլկարիոյ դեսպան Մարիա Պաւլովա-Յոցորկովան ՀՀ առողջապահութեան նախարարի տեղակալ Անահիտ Աւանէսեանին փոխանցած է Պուլկարիայէն Հայաստան փոխադրուած 500 հաւաքածու բժշկական պարագաներ (պաշտպանիչ համազգեստ, սաղաւարտներ եւ պաշտպանիչ ակնոցներ):

ՀՀ ԱԳՆ-ը բարձր կը գնահատած է գործընկերներու աջակցութիւնը եւ բարեկամական այս քայլը՝ համավարակի դէմ միասնական պայքարի ծիրէն ներս:

Պղտոր Ջուրի Բազում Որսորդներ

ԱՒԵՏԻՍ ՌԱՁՄԻԿ

Զարաբաստիկ համաճարակը կլանած է մարդկութիւնը: Անկանխատեսելի եւ համարեա անհաւատալի իրողութեան մը դէմ յանդիման գտնուեցանք, երբ աներեւոյթ հրէշ-ուրուական մը սպառնաց իր ճիրաններուն մէջ պլլուած պահել մարդոց կեանքն ու ապահովութիւնը, առողջութիւնն ու կեանքի բնականոն առօրեան: Կայծակնային արագութեամբ, մէկ օրէն միւսը, փոխուեցան կեանքին օրէնքները, մարդկանց յարաբերութեան կանոնները եւ ցարդ ընդունուած կարգերը: Համաճարակին զարհուրանքը, երբեմն իր իսկական տարողութենէն աւելի ուռճացած, համայնակուլ տգեղութեամբ ընկճեց մարդոց հոգեկանն ու տրամադրութիւնները: Խորքին մէջ սարսափն ու խուճապը, անտեսանելիին հանդէպ սոսկավիթխար կերպարանքի երեւակայութիւնը աւելի կքեցին ահասարսափ բազմութիւնները, յատկապէս՝ տարեցները անոնց: Վարակը իր գերանդիով դեռ կը շարունակէ իր չարաղէտ սպառնալիքը:

Ուշարժան է, թէ մեծ պետութիւններ եւս ցնցուեցան աղէտէն: Եւրոպական երկիրներ մատնուեցան ահազանգի՝ իր ողբերգական հետեւանքներով (Իտալիա եւ Սպանիա մանաւանդ): Առողջապահական վտանգին առընթեր, տնտեսական գահավիժումը, հոգեմտային պրկումները եւ անորոշին դիմաց անորոշութեան անդոհանքը վստահաբար պիտի ունենան ծանրակշիռ աւերներ:

Տնտեսապէս ամուր պետութիւններ այսօր ճգնաժամի մէջ են: Ինքնաբաւ կարծուած երկիրներ կը դիմադրաւեն գործազրկութեան աճին գալիք պատուհասը: Նիւթապէս կայուն համարուած հանրապետութիւններ պիտի դիմակալեն ընկերային կեանքի ցնցումներուն փորձաքարը: Փաստօրէն, էապէս շրջուեցաւ կեանքի ընթացիկ հունը:

Այս աշխարհացունց ժամանակաշրջանի բիրտ թաթէն, բնականաբար, զերծ չմնաց Հայաստան:

Ան եղած է տնօրէն Կլենտէյլի, Փասատինայի դպրոցներուն մէջ: Եղած է աշակերտական խորհրդատու, հոգեբանական խորհուրդի անդամ Լոս Անճելըս ու գաւառի կրթական ցանցի, բազմաթիւ եւ կրթական բազբաբնոյթ դասընթացքներու հետեւած է ան:

Խաչիկ Ճանոյեան.- Ի՞նչ կը հասկնանք երկլեզու ծրագիր ըսելով:

Էրիք Սահակեան.- Երկլեզու ծրագիրէն ներս դասաւանդութիւնը կ՚ըլլայ երկու լեզուներով անգլերէն եւ երկրորդ լեզուով մը: Երկրորդական վարժարանի պարագային աշակերտներուն կը դասաւանդուի օտար լեզու մը, շաբաթը երկու կամ երեք ժամ տեւողութեամբ:

Այս ծրագիրին շնորհիւ աշակերտին միտքը կ՚ընտելանայ երկու լեզուով մտածելու եւ կ«ունենայ այլ մշակոյթներ գնահատելու յատկութիւնը:

Մեր ծրագիրին նպատակն է պատրաստել երկու լեզու կամ աւելի լեզուներ խօսող, մտածող, ընթերցող եւ գրող անհատներ մեր երկրին համար: Յիշդ ասոր համար է, որ Փասատինայի Կրթական Խորհուրդը առաջին խորհուրդն է, որ ողջ Ամերիկայի մէջ նման ծրագիր մը ունի պետական դպրոցի մը համար:

Խ.Ճ.- Այդ դպրոցը ընդունուելու համար ի՞նչ պայմաններ կան:

Է.Ս.- Այդ դպրոցը ընդունուելու համար, անհրաժեշտ է որ նախ աշակերտը Փասատինայի բնակիչ պէտք է ըլլայ, կամ հարեւան քաղաքներու կամ որեւէ քաղաքի բնակիչ: Դիմողը (9-րդ-12-րդ) դասարանի աշակերտ պէտք է ըլլայ:

Մինչեւ Օգոստոս 6, 2020 կարելի է դիմել www.openenrolment.info հասցէին կամ հեռաձայնել (626)396-3606 թիւին:

Խ.Ճ-. Կրթական ծրագիրին մասին խօսինք, ի՞նչ լեզուով դասաւանդութիւններ տեղի պիտի ունենան Արեւելահայերէն կամ Արեւմտահայերէն:

Է.Ս.- Երկու լեզուներն ալ հաւասարապէս պիտի դասաւանդուին: Աշակերտը մուտքի քննութեան պէտք չունի:

Դասաւանդումը տեղի պիտի ունենայ չորս մակարդակով AI, AII, AIII, A IV:

Անշուշտ հայերէն գիտնալը պայման չէ, որովհետեւ այս դպրոցը գալով աշակերտը կրնայ հայերէն սորվիլ սկսնակ մակարդակին արձանագրoվելով, եւ ինչպէս ըսինք հայերէն պիտի դասաւանդուի հայերէն լեզուի որակաւորման եւ մասնագէտ ուսուցիչ-ուսուցչուհիներու կողմէ:

Պլէր դպրոցը իր շէնքով եւ կրթական մակարդակով շատ ծանօթ դպրոց մըն է, որուն բոլոր բարիքները պիտի վայելեն նորեկ արձանագրուող սաները, կը հրաւիրեմ մեր յարգելի ծնողները, ժամադրութեամբ օր մը կարենան այցելել այս դպրոցը եւ տեսնեն թէ ինչպիսի նախանձելի դպրոց մըն է այս կրթարանը:

Խ.Ճ.- Վերջաւորութեան, ինչպէ՞ս ծնունդ առաւ այս ծրագիրը:

Է.Ս.- Խումբ մը Փասատինա բնակող հայ քաղաքացիներ, մեզի դիմելով հետաքրքրութիւն ցոյց տուին եւ ուզեցին հայերէն սորվեցնող պետական դպրոց մը, որպէսզի իրենց զաւակները պետական վարժարանի ծրագիրին կողքին սորվին նաեւ իրենց մայրենի լեզուն:

Փասատինայի Կրթական Խորհուրդը ուսումնասիրեց այս դիմումը յղացաւ այս ծրագիրը:

Կը յուսամ, որ հայ համայնքի ծնողները պիտի օգտուին այս հնարաւորութենէն եւ իրենց զաւակները կը ղրկեն այս դպրոցը:

Խ.Ճ.- Պրն. Սահակեան սրտանց կը շնորհաւորեմ Ձեզ եւ Փասատինայի Կրթական Խորհուրդը այս եզակի ծրագիրին համար, Ձեզի կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

Մեր գնահատանքի եւ շնորհաւորութեան խօսքերը բոլոր այդ թանկագին ազգայիններուն ինչպիսի են՝ Տիկ. Մարօ Եագուպեան եւ Տիկ. Արսինէ Շիրվանեան, որոնց տենդագին աշխատանքին եւ հետապնդումին, կրցան Փասատինայի Կրթական Խորհուրդին հետ նման ծրագիրի մը հիմը դնել:

Բոլորին վարձքը կատար:

«Ակնթարթներ» Պէպօ Սիմոնեանէն (Բ.)

Կեանքի «ակնթարթներ» են նաեւ Պէպօ Սիմոնեանի 1980-ին հրատարակուած 280 էջանի «Ծուէն Ծուէն Երիզներ» հատորը:

Ահա բարեխիղճ դաստիարակն է որ կը խօսի իր սիրտէն. աշխատանքին բոլորանուէր կառչած տնօրէնի ապրումներ կան հոն: Գրութիւնը գրուած է 1973-ին:

«Կը սիրեմ դպրոցական վերամուտը...:

Տարին ինծի համար կը սկսի դպրոցական վերամուտին: Ջեմ կրցած այս հոգեվիճակէս ձերբազատուիլ: Ջե՛մ ալ փափաքած հարկաւ: Ուսանող տարիներէս ի վեր, մինչեւ օրս, վերամուտը ինծի համար իւրայատուկ անուշութիւն ունի եւ մէջս կ՛առթէ անմոռանալի յուզապրումներ:

Ես կը սիրեմ վերամուտը: Աշնանամուտի տխրադալուկ տրամադրութիւնը կը փոխարինէ զուարթութեամբ, կեանքով, աշխուժութեամբ եւ վերանորոգումի վերասլաց թռիչքով: Կամ՝ կը խորացնէ, հոգերու եւ տառապանքներու բեռով, ոմանց ալ աշնանային տխրութիւնը:

Ամէն տարի, երբ հնչեն դպրոցամուտի ոսկեհունչ զանգակները եւ բակին մէջ լսեմ հայ մանուկներու ճռուողիւնը, անլռելի դայլայլը, կը վերանորոգուիմ ամբողջ էութեամբ եւ կը համակուիմ ապրելու քաղցրութեամբ եւ տեւելու լաւատեսութեամբ:

1976-ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմի թէժ օրերուն, ծանր ոմբակոծումներէ ետք աւերակ կը դառնային նախկին հայկական թաղամասեր՝ Մասլախն ու Զարչափուխը: Նոր բնակիչները՝ պաղեստինցի եւ իսլամ, զոհ կ՛երթային անպատմելի վայրագութեանց, թշուառ ու թիթեղաշէն շրջանը՝ աւարի ու թալանի: Այդ թաղերը մեծցած էր Պ. Սիմոնեան եւ դառնօրէն կը յիշէ հոնկէ մազապուրծ եղած աղէտահարները, անոնց ողբերգական վիճակը, որոնք մարդասիրական օգնութիւններ կը ստանային, շրջանին կից, Նոր Հաճըն թաղի մարտական տողցմէ:

«Երկու մահացած զաւակները ձգած էր տան աւերակներուն տակ: Կը բզկտուէր: Կ՛աղաչէր հայ երիտասարդներուն, որ գէթ երկու զաւակներուն դիակները բերեն: Կը խոստանային: Եւ այդ խոստումով ալ կը յաջողէին ճամբել զինք:

Բայց կը մնային որդեկորոյս մօր արցունքներն ու սրտապատառ աղաչանքները մեզի հետ: Մեր սրտին մէջ...:

Քիչ անգին ուրիշ չդիտուելիք տեսարան մը...: 5-6 տարեկան փոքրիկ մը, գլուխէն վիրաւորուած, դէմքն ու գլուխը արիւնով թրջուած, իր ցաւերուն մէջ կը ճչար.

-Ըմմի՜, պէյլէ՜...:

Փոքրիկն ալ տարուեցաւ դարմանատուն: Խնամուեցաւ եւ ապա ճամբուեցաւ: Ճամբուած տեղը գուցէ գտնէր հայրն ու մայրը: Ով գիտէ՜...»:

Շրջան մը, Խալիլ Պետեւի թաղի Ազգային Ռուբինեան վարժարանին տնօրէնն էր Պ. Սիմոնեան: Թաղային հարցեր յաճախ անտեղի տաղտուկ պատճառած են անոր: 1977-ին կը գրէր.

«Այսպէս է թաղային վարժարաններու ճակատագիրը...:

Ոչ կրթական բազմաթիւ հարցեր՝ մտնելով դպրոցի յարկէն ներս, իրենց լուծումը կը գտնեն տնօրէնութեան սենեակին մէջ...:

Սկիզբը՝ տնօրէնութեանս առաջին տարիներուն, անակնկալ ու անժամանակ այցելուներուս հանդէպ քաղաքավար ըլլալու պարզամտութեամբ, դասապահ զոհած էի ակամայ...: Հետզհետէ հաստատած էի, որ անոնցմէ շատեր՝ ժամանակի գողեր են: Քաղաքավարութիւնդ չարաշահողներ: Փորձառու դառնալէս ետք՝ կարծրացած էի: Մերժած էի ընդունիլ: Ընդմիջած՝ եւ դասարան բարձրացած էի:

Ու հիմա, զիս ոչ կրթական հարցով զբաղեցնելու եկած պարոն թաղեցին ընդմիջելով, յառեցի.

-Կը ներէք պարոն, աւելի երկար չեմ կրնար մնալ, դասաւանդութեան համար, վեր, դասարան պիտի բարձրանամ:

Զգեցի, ելայ: Անկոչ հիւրս քրթմնջիւններ արձակեց ետեւէս: Կարեւորութիւն չտուի: Արդէն տասը վայրկեանս գողցած էր»:

Պատկեր մը պատերազմէն՝ երբ հացի հերթեր էին փուռերու առջեւ. գրուած՝ 1979-ին.

«Ի՞նչ ընէ... եթէ՝ վաղը նախատեսուած մեծ բռնկումը իրականանայ եւ անօթի մնացողներ ըլլան:

Անօթի մարդուն ռունգը՝ հացին հոտը շուտ կ՛առնէ...:

Ու հացը, սա հաց սպասողներուն ձեռքը չհասած, կ՛եփի կարծես իրենց հոգիներուն քաղցա՞ծ ու տաքցա՞ծ փուռին մէջ անհո՛ւր...: Ու քաղցրածաւա՞լ բոյրերը հացերուն՝ տաք-տաք կը հասնին իրենց ռունգերուն...:

Հաց ճարելու համատարած սա խուճապը եւ իրարանցումը՝ անխաղաղ օրերու եւ պատերազմի յատուկ երեւոյթ է...: Գոնէ Լիբանանի համար...ե եւ ապա կը մաղթէ՝ «Ոչ մէկ մարդ տան մէջ... կամ փուռին առջեւ... հաց սպասէ անյուսալիր...

Հաց սպասող չմնայ...:

Ոչ մէկ եղերերգ գրուի հանապազօր հացի համար...»:

Հայրենասիրութեամբ զեղուն պահ մը՝ «Իմ Հայաստանս» գրութիւն-մտորումէն.

«Հայաստանը, առա՛նց Անիի եւ հազար ու մէկ եկեղեցիներու Հայաստան մըն է...:

Իսկ ես՝ աշխարհի մայրաքաղաքներուն մէջ Անին փնտռող, երազող յոգնա՛ծ ուղեւոր...:

-Առանց Անիի ի՞նչ Հայաստան, կը ճչայ մէջէս հին հայը...:

=Իմ Հայաստանս «Մեր Նոր Անի» քաղաքամայր Երեւանի կողքին, հին Անիով, իր հազար ու մէկ եկեղեցիներով, խաչքարերով գեղեցկացած, լայնցած, սրտբացօրէն լայնատարած Հայաստանն է՝ իր հին ու նոր քաղաքներով, հին ու նոր եկեղեցիներու զողանջող զանգակներով...: Կը պատասխանէ նո՛ր հայը մէջէս...»:

Վերադառնանք «Ակնթարթներ» հատորին. էջ 51-ին մէջ՝ «Մաշտոցի Պոլսոյ Տուներէն Մէկը Փակ է..» գրութեան մէջ կը կարդանք.- «Սուրբին ականջը վիրաւորեր էին ու սիրտը խոցեր՝ հեռաւոր Պոլսոյ ափերէն, Պոսֆորի եզերքներէն ականջը հասած լուրերը: Հայերէն Այբենգիմը սորվեցնող իր հարազատ եւ հաւատարիմ Տուներէն մէկը՝ իր պատերէն պիտի չ՛արձագանգեր այսուհետեւ, հարիւր քառասուն ինն տարիներ Ա. Բ. Գ. արձագանգելէ ետք...:

Օշական գիւղի Մաշտոցի յաւերժալոյս դամբարանը եզերող ծառերէն, 1981ի Աշնան, երեսունութը տերեւներ ինկան գիտին...»:

Պոլսոյ մասին՝ «Վայնասուններ կը սուլեն այժմ...

Հայկական Պոլիսը ուրիշ դիմագիծ է ստացեր հիմա...

Հայ Դպրութեան զանգակատուն մը կտրեր է հայահունչ զանգակը...»

Եւ կարծէք այսօրը նախատեսելով Պէպօ Սիմոնեան կ՛ապրի տագնապանքը գալիքին՝ երբ մէկ մէկ պիտի փակուէին Տուները Մաշտոցի: Դա՛ռն գուշակութիւն:

«Օշականի սուրբը եւ իր լուսաշող դամբարանը ոչ միայն ցնցուեր են իրենց ողջ էութեամբ, այլ՝ անդոհալի անձկութեամբ պաշարուած կը մտատանջուին, որ չը ըլլայ Հայկական Սփիւռքի մաշուին հետ, ուծացող հայերու բազմացող քանակին հետեւանքով, ամէն տարի Սփիւռքի Հայաստեղծ Տուներէն մէկը փակուի...: Դատարկուի...»:

Ապա, «Աւելածուին Պէս...», 1985-ին, կը պատկերէր իր քաղաքացիական պարտականութեան գիտակից աւելածուն, կը դրուատէր համեստ աշխատանքով գոյատեւող, բայց տիպար մարդը, որպէս առաքինի եւ օրինակելի լիբանանցի.

«Աղտ հաւաքելու եւ աւելածուի սեւագործ աշխատանքին հանդէպ լուսաբացի աւելածուին նուիրուածութիւնը սքանչացումով դիտելէ ետք, անգամ մը եւս մէջս կը վերահաստատուի այն համոզումը, որ աշխատանքին որակն ու բնոյթը չէ՛ երբեք, որ կը բնորոշէ պատասխանատուութեան, գործին հանդէպ հաւատարմութեան, պարտաճանաչութեան գիտակցութիւնը:

Այս աղբահաւաք աւելածուին պէս մարդիկն են, որ հայրենիք կը կերտեն, ընկերութեան բարոյական կառոյցը կ՛ամրացնեն, տիպար քաղաքացիի կերպարը կը ստեղծեն...:

Պատերազմին առաջացուցած աղտերը մաքրելու եւ պատճառած վէրքերը դարմանելու համար, այս աւելածուին պէս անկեղծ ու վաւերական քաղաքացիներու անհրաժեշտութիւնը կը զգացուի այսօրուան եւ վաղուան Լիբանանին համար...»:

Ընկերվարական մարդու յանձնառութեամբ, ան կը տուայտի գրկեալներու պայքարով: 1986-ին գրուած «Զրկեալներուն Հետ...» գրութիւնը ճիշդ մերօրեայ Լիբանանն է իր ընկերային-տնտեսական տագնապներով եւ ժողովրդային պոռթկումով.

«Այս գիշեր նորէն անոնց հետ է հոգիս, զրկեալներուն հետ, որոնք Լիբանանի բոլոր անկիւններէն տխեղծ ու տխուր ուրուականներով կ՛արշաւեն վրաս: Սովահարներու, անօթիներու, թշուառներու զազազած բանակ են կարծես...: Անպաշտպա՛ն ու անպատսպար «բանակ»:

Լիբանանի մէջ բանակ կազմած թշուառները կրօնք ու ազգութիւն չունին, անո՛նք, պատերազմի դժբախտացած ու թշուառացած սերունդն են, պատերազմէն ու տնտեսական սուր տագնապէն պատուհասուած խարխլած խլեակներ՝ որոնք գրկեալներու լո՛ւռ ու անտրտունջ դասակարգը կը կազմեն...

Աստուած գուցէ՝ վերէն իրենց հետ է, բայց Աստուծոյ երկրպագող եւ անոր անունով վարը գործողները հեռու են, օտար ու անհաղորդ՝

Շար.ը էջ 15

Հայերը ի Պաքու

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ

Պաքուի մէջ հայեր ապրած են հնագոյն ժամանակներէն ի վեր: 500 թուականին Արցախի հայոց Վաչագան Բարեպաշտ թագաւորը հոն կառուցել տուած է առաջին հայկական եկեղեցին: 1820-ին 434 հայ ապրած է Պաքուի մէջ: Ըստ 1899-ի մարդահամարի տուեալներուն՝ բնակչութեան ընդհանուր թիւը հոն եղած է 182.897, որոնց 22.506-ը՝ հայ:

1915-ի տուեալներով՝ Պաքուն ունեցած է 86,5 հազար հայ բնակիչ: Յաջորդող տարիներուն այդ թիւը աճած է:

1918-ի սկիզբներուն հայոց թիւը այդ քաղաքին մէջ անցած էր 90 հազարը: Եթէ նկատի ունենանք, որ քաղաքին բնակչութեան ընդհանուր թիւը շուրջ 200 հազար էր, հանգիստ կրնանք եզրակացնել, որ հայոց թիւը բնակչութեան գրեթէ կէսն էր: Նշենք, որ կովկասեան թուրքերը, որոնք 1936-ին Սթալինի կողմէ կնքուեցան «ատրպէյճան- ցիներ» անունով, այդ շրջանին կը կազմէին բնակչութեան մօտ քառորդը, այնպէս որ Պաքուի մէջ հայերը թիւով առաջին տեղը կը գրաւէին, թուրքերը՝ երկրորդ, իսկ ռուսերը՝ երրորդ, մինչ մնացած ազգերը՝ բաղդատաբար աւելի քիչ:

Ահա թէ ինչու Պաքուն, 80 առ հարիւր հայկական բնակչութիւն ունեցող Թիֆլիսին հետ, իրաւամբ կը համարուէր Կովկասի հայկական քաղաքներէն մին:

Յաւօք, 15 Սեպտեմբեր 1918-ին, 9-ամսեայ պայքարէ ետք, Պաքուն անցաւ օսմանեան Վանակին եւ անոնց եղ- Վայրակից կովկասեան թուրքերուն: Հայոց թիւը արագ նուազեցաւ. միայն այդ օրերուն կոտորուեցաւ 30 հազար հայ:

Հայերը այդ քաղաքին մէջ ապրած են որոշ թաղամասերու եւ մերձակայ աւաններուն մէջ:

20-րդ դարասկիզբին թաղամասային սահմանները վերացած եւ հայաշատ մնացած են Հայկաշէն (Արմենիքենդ) եւ Ջաւակզալնի կոչուած թաղամասերը, ինչպէս նաեւ քաղաքին կեդրոնը:

Ըստ 1970-ի տուեալներուն՝ Պաքուի 1,27 միլիոն բնակչութեան աւելի քան 200 հազարը հայ էր:

1980-ականներու վերջերուն հայոց թիւը եղած է շուրջ 300 հազար:

13-19 Յունուար 1990-ին, Պաքու կազմակերպուած հայերու ջարդերէն ետք, դարաւոր հայ համայնքը դադրեցաւ գոյութիւն ունենալէ: Մարդիկ հեռացան, հոն ձգելով իրենց ամբողջ ունեցուածքը:

ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Պաքուի հայերը ծաւալած են տնտեսական, առեւտրական եւ շինարարական լայն գործունէութիւն եւ աչքի զարկած են յատկապէս նաւթարդիւնաբերութեան ասպարէզին մէջ: Պաքուի առաջին արդիւնաբերական նաւթահորը, որ սկսած է աշխատիլ 1869-ին, պատկանած է Ի. Միրզոեւին:

ԺԹ. դարավերջին, կարճ ժամանակի ընթացքին, Պաքուի եւ յարակից շրջաններու մէջ կազմաւորուած են կարգ մը հայկական ընկերութիւններ: Հայ գործարարները իրենց գործիմացութեան ու եռանդին շնորհիւ վաստակած են մեծ հարստութիւն եւ ազդեցութիւն՝ ի խնդիր ամբողջ նահանգի տնտեսութեան զարգացման: «Միրզոեւ եւ Եղբ.», «Մանթաշեւ եւ Ընկ.», «Ղուկասով Եղբ.», «Լիանոզով եւ Ընկ.», «Արաֆելով եւ Ընկ.», «Փիլիպոսեանց Եղբայրներ», «Աստուածահաճոյ Ձկնարան», «Արամազդ», «Արարատ», «Մասիս», «Աստղիկ», «Սիւնիք», «Արալօ-Կասպիական» եւ հայերուն պատկանող տասնեակ այլ ընկերութիւններ զբաղած են գերազանցապէս նաւթարդիւնաբերութեամբ, ունեցած են իրենց փոխադրամիջոցները (այդ կարգին՝ ծովային), եւ իրենց արտադրանքը արտահանած են հեռու եւ մօտիկ շուկաներ:



Պաքուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին 1904թ.

Պաքուի նաւթարդիւնաբերութեան հիմքը դրած է Յովհաննէս Մինասի Միրզոյեան: Ան առաջինն էր, որ 1868-ին հիմնեց քերոսինի երկու գործարան եւ առաջինն էր, որ արտահանեց քերոսինը: Միրզոյեանի ճիգերով 1871-ին հիմնուեցաւ առաջին արդիւնաբերական հորատանցքը, 1872-ին՝ յաջորդեց երկրորդը: Միրզաբէկեանները զբաղած են ծխախոտագործութեամբ, Մայիլեան եղբայրները, կամուրջները, փիթուրները եւ Վենեցովները մեծապէս նպաստած են ձկնարդիւնաբերութեան զարգացման, Արուեանները՝ գինեգործութեան, Փիլիպոսեանները՝ տուրմագործութեան (շոքոլա):

Պաքուի առաջին դրամատուներու (Թիֆլիսի առեւտրական դրամատան մասնաճիւղ, Փոխադարձ վարկի ընկերութիւն) հիմնադիրները նոյնպէս եղած են հայերը:

1907-ին Պաքու արտադրուող 448 միլիոն փութ նաւթին 54,4 առ հարիւրը, 1917-ին՝ 368 միլիոն փութին 53 առ հարիւրը պատկանած է հայերուն: 1907-ին քաղաքին մէջ գործող 154 ընկերութիւններուն 89-ը եղած են հայկական: Անդրկովկասի շոքոլայի առաջին գործարանը 1891-ին Պաքուի մէջ հիմնած են Փիլիպոսեանց եղբայրները: Այդ ձեռնարկութիւնը միակը եղած է ամբողջ Կովկասի տարածքին, որ արտադրած է ընտիր շոքոլա, ինչպէս նաեւ բարձրորակ քարամելի տեսակներ: Սոյն արտադրութիւնը միջազգային տարբեր ցուցահանդէսներու մէջ արժանացած է 3 ոսկէ մետալի:

Քաղաքին խոշորագոյն առեւտրական տունը պատկանած է Թումանեան եղբայրներուն:

Զգալի եղած է հայերուն կշիռը տնտեսութեան այլ՝ մաս- նաւորաբար մետաքսագործութեան, բամպակագործութեան ճիւղերէն ներս: Պաքու դարձած էր Անդրկովկասի հայերուն հասարակական-քաղաքական, մշակութային կեդրոններէն մին...

ՊԱՔՈՒԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

1863-69-ին Պաքուի հայերը կառուցած են Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ մէկ քանի անգամ նորոգուած ու վերակառուցուած է: Եկեղեցիին կից պահպանուած էին ԺԸ.-ԺԹ. դարասկիզբի թուակիր հայերէն արձանագրութիւններով տապանաքարեր: Խորհրդային իշխանութեան տարիներուն ամբողջ Ատրպէյճանի տարածքին հայկական միակ գործող եկեղեցին էր:

1895-ին օծուած է Պաքուի հայկական գերեզմանատան Սուրբ Յարութիւն մատուռ-եկեղեցին, 1911-ին՝ տեղւոյն հայութեան միջոցներով կառուցուած է Ս. Թադէոս եւ Բարդուղոմէոս եկեղեցին, որ ունեցած է 1500 տեղէ բաղկացած աղօթասրահ, ընդարձակ նախասրահ եւ աչքի զարկած է իր վեհ ճարտարապետութեամբ ու շքեղ կահաւորումով:

1930-ականներուն այդ եկեղեցին քանդուած եւ տեղը կառուցուած է Պաքուի երաժշտանոցին շէնքը:

Հայկաշէն թաղամասին մէջ մինչեւ 1920-ականները գործած է Ս. Թարգմանչաց եկեղեցին:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ...

Տնտեսական զարգացման զուգահեռ քաղաքին մէջ սկսած է աշխուժանալ նաեւ մշակութային կեանքը, ուր մեծ եղած է Պաքուի հայկական համայնքին դերը: Հայ համայնքը մեծ ներդրում ունէր նաեւ քաղաքաշինութեան մէջ: 1885-1915 թուականներուն Փեթերպուրկի քաղաքացիական ճարտարագէտներու կայսերական հաստատութեան մէջ իրենց ուսումնառութիւնը աւարտած 115 հայ երիտասարդ կու գային ամբողջացնել Անդրկովկասի քաղաքաշինութեան ոլորտի մասնագիտական բացը:

Հաստատուելով տնտեսական մեծ հեռանկարներ ունեցող Պաքու քաղաքին մէջ, հայ մասնագէտները կը ներգրաւուին Վբազմաթիւ նախագիծերու մէջ: Անոնցմէ յայտնի են Նիքոլայ (Նիկողայոս) Բաեւ, Վարդան Սարգսեան, Յովհաննէս Տէր Յովհաննիսեանց:

1911-1918-ին Ն. Բաեւ եղած է Պաքուի գլխաւոր ճարտարապետ: Իր իւրօրինակ ոճով կ'առանձնանայ անոր նախագիծով կառուցուած Մայիլովի թատրոնին շէնքը, ուր այսօր կը գործէ Ատրպէյճանի օփերայի եւ պալէի պետական ակադեմական թատրոնը:

Հայ համայնքը ունեցած է թատերական խումբեր, երաժշտական համոյթներ, գրադարան-ընթերցարաններ, ակումբներ, նաեւ տպարաններ, ուր հրատարակուած են հայերէն պարբերականներ, դասագիրքեր, գրականութիւն եւ այլն:

Հայ համայնքին հասարակական կեանքը կազմակերպած են բազմաթիւ բարեգործական, մշակութային, երիտասարդական կազմակերպութիւններ...

Պաքուի առաջին հայկական դպրոցը 1860-ին բացուած է Ա. Տէր Ղեւոնդեանին ճիգերով: ԺԹ. դարավերջին հոն գործած են 12 հայկական դպրոցներ:

1903-ի մարդահամարի տուեալներով՝ պաքուեցիներուն մէջ բարձրագոյն կրթութիւն ունեցողներուն 1,2 առ հարիւրը եղած են ռուսեր, 1,5 առ հարիւրը՝ հայեր, մինչ թաթարները պարսիկներուն հետ կազմած են միայն 0,1 առ հարիւրը:

1930-50-ականներուն գործած է 80 հայկական միջնակարգ դպրոց, մանկավարժական ուսումնարան, հայկական բաժիններ՝ Պաքուի համալսարանի եւ մանկավարժական ինսթիթիւթին մէջ: Պաքուի մէջ հայկական վերջին ուսումնական հաստատութիւնը (դպրոց) դադրած է գործելէ 1983-ին:

Այս քաղաքին մէջ իրենց գործունէութիւնը ծաւալած են նաեւ հայ ազգային կուսակցութիւնները՝ ՍԴՀԿ, ՀՅԴ եւ Ռուսական կայսրութեան մէջ գործող գրեթէ բոլոր ազդեցիկ կուսակցութիւններուն հայ ներկայացուցիչները:

Համայնքին ազգային կեանքը, այլ կազմակերպութիւններու հետ, տնօրինուած է Հայոց Կեդրոնական Ազգային բիւրոյի ներկայացուցչութեան կողմէ: 1905 Փետրուարին, երբ ցարական իշխանութեանց հրահրումով թաթարները (ատրպէյճանցիները) ձեռնարկած են անզէն հայերուն ջարդը, դաշնակցականները կազմակերպած են ինքնա- պաշտպանութեան ջոկատներ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ

«Տուէք այնպէս, որ աջ ձեռքը տալիս, ձախը չիմանայ»

Ա. Մանթաշեանց

Իր մեծ ու տաղանդաւոր գրչեղբօր, եղեռնամահ Սիամանթոյին մասին գրուած յօդուածներէն մէկուն մէջ, Պ. Սեւակ իրեն յատուկ դիպուկութեամբ ու տաղանդի ուժով ընդամէնը երկու երեք տողով կը ներկայացնէ Սիամանթոյին անցած ամբողջ ուղին. «Եթէ չըլլար Սի-

Մատենադարանում Նորագոյն Տեխնոլոգիաներով Յագեցած Թուային Ցուցահանդէսի Ծրագիր



Ծրագրի նկարագրութիւն

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը հայ եւ համաշխարհային գրաւոր ժառանգութեան խոշորագոյն կենտրոններից մէկն է: Այն ոչ միայն հին ձեռագրերի պահպանման, վերականգնման եւ ուսումնասիրման բացառիկ հաստատութիւն է, այլեւ մի եզակի ինստիտուտ-թանգարան, որն այսօր դարձել է Հայաստանի խորհրդանիշերից մէկը: Ունի հայ միջնադարեան ձեռագրերի, հնատիպ գրքերի, արխիւային փաստաթղթերի ամենահարուստ հավաքածուներից մէկը: Այստեղ պահպանւում են ավելի քան 20.000 ձեռագիր մատեաններ, ոչ միայն հայերէն, այլեւ պարսկերէն, արաբերէն, օսմաներեն, ասորերէն, եթովպերէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, եբրայերէն, հին սլաւոներէն եւ այլ լեզուներով, որոնք ներառում են միջնադարեան արուեստի եւ գիտութեան բոլոր բնագաւառները:

Մատենադարանն այսօր ամենաճանաչված այցեքարտն է Հայաստան այցելող հազարաւոր զբօսաշրջիկների համար: Ունենալով տարեկան 100 հազարից ավելի այցելուներ աշխարհի տարբեր երկրներից, Մատենադարանի կարեւորագոյն խնդիրներից մէկն է ապահովել ներկայանալի, յագեցած ցուցադրութիւններ, նաեւ նորագոյն տեխնոլոգիաներով եւ ժամանակակից սարքաւորումներով յագեցած ցուցադրութիւններ, որոնք առաւել արդիւնաւէտ, հետաքրքիր եւ արդիական են դարձնում մատուցուող նիւթը:

Այս ուղղութեամբ նախատեսում էինք առաջիկայում մի շարք հետաքրքիր նորութիւններով դիմաւորել մեր այցելուներին, սակայն համավարակով պայմանաւորուած ստիպուած եղանք վերանայել մեր ռազմավարութիւնը՝ ավելի արագ եւ օրվայ պահանջներին համապատասխան լուծումներ տալ, կենտրոնանալով Թուային Մատենադարան ստեղծելու ծրագրի վրայ, որը հնարաւորութիւն կտայ աշխարհի չորս ծագերից այցելել Մատենադարան առցանց տարբերակով, այդպիսով մշտապէս բաց պահելով հայ մշակոյթի գանձարանի դռները լայն հանրութեան առջեւ:

Թուային Մատենադարանի այցելուները կարող են իրենց յարմար ժամանակ, իրենց յարմար վայրում մուտք գործել Մատենադարան, մատչելի եւ բազմաբովանդակ կերպով ծանօթանալ մեր ձեռագրական ժառանգութեանը, ինչպէս նաեւ նորագոյն տեխնոլոգիաների՝ արտ ինստալացիաների միջոցով շրջել մանրանկարների հրաշագեղ տիրոյթում: Այս ամէնը կուղեկցվի տարբեր լեզուներով համապատասխան բացատրութիւններով, հայկական միջնադարեան երաժշտութեամբ: Բարձրարուեստ ձեռագրերի պատկերազարդ էջերը կթվայնացվեն բարձր որակով՝ հնարաւորութիւն տալով ներկայացնել դրանք մեծադիր չափերով, ինչպէս նաեւ ստեղծել հոլոգրաֆիկ եւ անիմացիոն պատՍոյն ծրագիրը կարեւոր քայլ կդառնայ Մատենադարանի թանգարանային հավաքածուները, ցուցասրահները, ինչպէս նաեւ յատուկ հետաքրքրութիւն ներկայացնող մի շարք բաժիններ այդ թւում՝ պահոցները, աշխատանոցները, վերականգնման եւ այլ բաժիններ գրաւիչ կերպով ներկայացնելու հանրութեան, որը հնարաւոր չէր լինի տեսնել ֆիզիկապէս այցելելու պարագայում:

Ծրագիրը կարեւոր է նախ եւ առաջ ժամանակակից միտումներից հետ չմնալու համար: Աշխարհի բոլոր առաջատար թանգարանները ներկայում կազմակերպել են առցանց այցելութիւններ, իսկ Մատենադարանն աշխարհին յայտնի է որպէս կայացած թանգարան-ինստիտուտ, որի հանդէպ հետաքրքրութիւնն օրէցօր աճում է:

Ակնկալուող արդիւնքներ

-Ամբողջովին վերստեղծել Մատենադարանի կայքը՝ ձեւաւորելով Մատենադարանը ներկայացնող թուային հարթակ

-Ստեղծել հզօր, անվտանգ սերվերների եւ բարձրակարգ սպասարկման ամբողջական ցանց

-Մեծացնել Մատենադարանում պահվող ձեռագիր ժառանգութեան թուային շտեմարանը, ապահովելով ձեռագրերի պահպանումը ամպային տիրոյթում, ինչպէս նաեւ դրանց արագ եւ որակով սպասարկումը

-Բարձրացնել մարդկանց իրազեկվածութիւնը Մատենադարանի մասին որպէս հայկական ձեռագիր ժառանգութեան կարեւորագոյն կենտրոն, ծանօթացնել հայ գրչութեան արուեստին եւ մանրանկարչական դպրոցներին,

-Համապատասխանեցնել միջազգային թանգարանների չափանիշներին,

-Հանրահռչակել եւ աշխարհին հասանելի դարձնել հայկական միջնադարեան արուեստի բացառիկ դրսեւորումներից մէկը համարուող մատենական արուեստը, որը բոլորիս հպարտութեան առարկան է:

Ակնկալում ենք մեր ժողովրդի ազնիւ, մշակութասէր զաւակների աջակցութիւնն ու անմիջական մասնակցութիւնը մեր այս ծրագրին: Մատենադարանը ամէնից առաջ հոգեւոր գանձերի շտեմարան է, սրբազան մատեանների պահոց, ազգային մշակոյթի տաճար յաջորդական սերունդների համար: Վստահ եղէք՝ Մատենադարանի համար Ձեր ցանած սերմերը պիտի արգասաւորվեն ու բազմապատկվեն՝ օրհնութիւն եւ բարիք բաշխելով Ձեզ եւ Ձեր սերունդներին:

Մեր խորին շնորհակալութիւնը բոլոր աջակիցներին եւ նուիրատուներին, որոնք երերուն ու անհաստատ այս օրերին կանգնեցին եւ կանգնելու են հայ ժողովրդի յաւէրժութեան խորհրդանիշ Մատենադարանի կողքին:

MATENADARAN DIGITAL TRANSFORMATION PROJECT

(Cost breakdown)

– 41,000 Website (Mobile Application for audio guide and shopping is included)

– 20,000 Server Block

– 14,500 Video Guide, 1 video up to 50 min + 3 videos up to 15 mins

– 10,000 Audio Guide (up to 100 units) with QR codes

– 12,000 Maintenance for 3 years

– 2,500 Provision of secure internet connection line for 3 years

– 100,000 USD TOTAL

Հեռակայ Բանավէճ Պոլսոյ Հայոց Պատրիարքին եւ Կարօ Փայլանին Միջեւ

Պատրիարքական ընտրութիւններէն շուրջ կէս տարի անց, Թուրքիոյ խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանը ու Պոլսոյ Հայոց պատրիարք Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանը հեռակայ բանավէճի բռնուած են ընտրութիւններու օրինականութեան հարցի շուրջ:

Օրերս Փայլան կրկին յայտարարած էր, թէ չի ճանչնար Մաշալեան արքեպիսկոպոսը, որպէս պատրիարք, ընտրական գործընթացը համարելով անարդար:

Սահակ երկրորդ պատրիարքը, հակադարձելով Փայլանին, նախօրէին իր ֆեյսպուքեան էջին վրայ գրած է, որ ինք ընտրուած է արդար պայքարով, ստանալով քուէարկող պատուիրակներու ձայներու մեծամասնութիւնը: Ան նաեւ շեշտած է, որ պատրիարք ընտրուելու կապակցութեամբ շնորհաւորանքներ ստացած է Թուրքիոյ եւ Հայաստանի ղեկավարութիւններէն, հոգեւոր եւ աշխարհիկ բարձրաստիճան այրերու կողմէն, որոնք ոչ մէկ կասկած չեն յայտնած ընտրութեան արդիւնքներու օրինականութեան վերաբերեալ:

Ցիշատակելով իր նախորդին՝ Մեսրոպ Մութաֆեան պատրիարքին եւ Հրանդ Տինքի միջեւ եղած հակասութիւնները, Սահակ Մաշալեան ցաւով արձանագրած է, որ Փայլանի այսպիսի դիրքորոշումը կրնայ պառակտիչ ազդեցութիւն ունենալ ներհամայնքային կեանքին վրայ: Այնուհանդերձ, Մաշալեան պատրիարք կը յուսայ, որ «յետդարձի ճանապարհ դեռ կայ, եւ Փայլան չէ այրած բոլոր կամուրջները»:

Ի պատասխան՝ Կարօ Փայլան գրած է, թէ ուղղուած քննադատութեան նպատակը Պոլսոյ պատրիարքական աթոռը աւելի ուժեղ տեսնելն է: Ան նշած է, որ այս դժուարին ժամանակաշրջանին, կործանիչ բանավէճերը հայ համայնքին ամենաքիչը պէտք են, առաջարկելով ուժերը կեդրոնացնել կուտակուած համայնքային խնդիրներու լուծման վրայ:

12 տարի սպասելէ յետոյ, անցեալ տարուայ դեկտեմբերին Սահակ Մաշալեան հոգեւոր ու աշխարհական պատուիրակներէն կազմուած Ազգային պատգամաւորական ժողովի կողմէն ընտրուեցաւ Պոլսոյ Հայոց 85-րդ պատրիարք: Թուրքիոյ ներքին գործոց նախարարութեան կողմէ նոր պատրիարքի ընտրութեան համար ուղարկուած կանոնադրութեան համաձայն՝ պատրիարքի թեկնածու կրնային ըլլալ միայն Պոլսոյ պատրիարքական աթոռին ենթակայ եպիսկոպոսները: Այս սահմանափակումով խոչընդոտուած էր Թուրքիայէն դուրս ծառայող շարք մը եպիսկոպոսներու առաջադրուելու հնարաւորութիւնը, ինչ որ դժգոհութեան ալիք բարձրացուցած էր պոլսահայ համայնքին մէջ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Tel: (626) 797-7680
Massis2@earthlink.net

Ցաւալի Ցուցանիշ

Շարունակուած էջ 2-էն

նկատելի է, որ դիմակների եւ ձեռնոցների կրումը յամենայն դէպս բաւականին տեսանելի է:

Կրկնենք, բացարձակութեան սպասումը, որեւէ երկրում, կը լինի ինքնախաբէութիւն:

Ներկայումս գերխնդիրը առողջապահական կարողութիւնների հնարաւորինս արագ աւելացումն է, հնարաւորինս շատ կեանքեր փրկելու տեսանկիւնից: Մեծ հաշուով, թող չհնչի տարօրինակ, սակայն հակահամաճարակային պայքարի ցուցանիշը գնահատելու համար դեռ պահանջուելու են ամիսներ, յամենայն դէպս քանի դեռ չկայ պատուաստանիւթ եւ չի առաջացել այսպէս ասած ամփոփելու զրօական վիճակ:

Ակնառու է, որ ներկայումս կայ համընդհանուր պատկեր, որը հեռու է իրականութիւնից: Ըստ այդմ, այսօր գերխնդիրն է կենտրոնացնել ամբողջ ռեսուրսը առողջապահական կարողութիւնների ընդլայնման եւ մահերի կանխարգելման վրայ, ի հարկէ շարունակելով անվտանգութեան միջոցառումների հսկողութիւնն ու դրանք կիրառելու հանրային, սոցիալական քարոզչութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

«Ակնթարթներ» Պէպօ Սիմոնեանէն

Շարունակուած էջ 12-էն

անոնց զրկեալի կսկծող ցաւին, արիւնող վիշտին, մաշեցնող տառապանքին...»:

«Դարերու Համար Դպրոց Կը Շինեն», 1988-ին գրուած յօդուածը դրուագ մըն է անոր մէկ արտաքնայ այցելութենէն քաղուած: Իր տիկնոջ հետ անգլիական Ըէտինկ քաղաքն է, ուր կը նկատեն պատմական կառոյց մը. կը պարզուի, որ դպրոց մըն է 1400-ականներուն կառուցուած եւ ցարդ գործող: Այսինքն՝ շուրջ 600 տարիէ ան սերունդներ կը պարգեւէ երկրին: Տիկ. Ազատուհին կ'ըսէ. «Դարերու համար դպրոց կը շինեն»: Մինչ այդ, Լիբանանի մէջ կը շարունակուէր պատերազմը, վտանգուած են հայ գաղութն ու իր ազգային հաստատութիւնները, կրթօճախները մանաւանդ: Ահա մտահոգիչ «ակնթարթ» մը Պ. Սիմոնեանէն.

«Միակ յաւիտենականը սեփական երկրի ապահով հողին վրայ կերտուողն էր: Անկէ դուրս ամէն ինչ անցաւոր ու ժամանակաւոր բնոյթ ունէր...: Նոյնի՛սկ վաղը, պատերազմի աւարտէն ետք, եթէ կանգուն մնայիր բոլոր հայկական դպրոցները, զանոնք լեցնելու չափ հայու զաւակներ պիտի մնայի՞ն»:

Հայերը ի Պաքու

Շարունակուած էջ 14-էն

ամանթօն, մեր գրականութեան պատմութիւնը թերի պիտի մնար, առանց աքլորականչի եւ առանց բարի լոյսի»:

Սեւակեան փակագիծերը քիչ մը բանալու պարագային, նոյն ձեւով կրնանք գնահատել Կոմիտասը եւ Եկմալեանը, Վարդգէս Սուրէնեանցն ու Մարտիրոս Սարեանը, իսկ բոլորովին տարբեր ոլորտի մը մէջ՝ Կիւլպէնեանն ու Մանթաշեանցը... Հայ մեծահարուստները քիչ չէին այդ շրջանին, բայց այս երկուքն էին, որ ազնուօրէն, անհատոյց ու արժանապատուօրէն կատարեցին ազգային բարերարի իրենց բարձր առաքելութիւնը:

3 Մարտ 1842-ին ծնած Ալեքսանդր Մանթաշեանց «Անդրկովկասի թիւ մէկ ելեւմտագէտ»-ն էր, «Նաւթի արքան» եւ ժամանակի ամէնէն հարուստ մարդոցմէ:

Ան հրաշալի գիտեր հայերէն, ռուսերէն, վրացերէն եւ անգլերէն:

1909-ի վիճակագրութեամբ Ռուսական կայսրութեան ամենահարուստ մարդոց ցանկին 13-րդ տեղը գրաւող Ալ. Մանթաշեանց ինքզինք գործարանատէր չէր սեպեր եւ անձամբ կը վարէր իր բոլոր առեւտրական գործերը: Այսրկովկասի ամենահզօր տնտեսագէտ եւ փաստացի ամենամեծ դրամատան սեփականատէր Մանթաշեանց:

1899 ին՝ ընդառաջելով Մ. Արամեանցի յորդորներուն, կը հիմնէ «Ալեքսանդր Մանթաշեւ եւ Քօ» նաւթարդիւնաբերական եւ առեւտրային ընկերութիւնը, որ անոր տքնաջան աշխատանքին, բնածին խելքին եւ ձեռներէցութեան շնորհիւ, 20-րդ դարասկիզբին կ'արդիւնահանէ եւ կ'արտահանէ Պաքուի նաւթին 1/3-ը:

Ընկերութեան նաւթի առեւտրական տուներն ու անոնց մասնաճիւղերը կը տարածուէին ամբողջ աշխարհով մէկ: 1899-1909-ի ընթացքին անոր ընկերութիւնը իր հիմնական դրամագլուխին չափով ամենամեծն էր ռուսական արդիւնաբերութեան մէջ:

1904-ի Պաքուի նաւթի արդիւնահանման ծաւալով ան կը զիջէր միայն «Նոպէլ Եղբայրներ»-ուն եւ Ռոտշիլտ եղբայրներու «Կասպիական սեւծովեան ընկերութեան»: Մանթաշեանց ֆինանսաւորած է Պաքու-Պաթում նաւթամուղի շինարարութիւնը եւ 1907-ին կառուցել տուած է աշխարհի առաջին՝ 835 մ երկարութեան նաւթամուղը: Ան ունէր հանքեր, գործարաններ, կալուածներ, տուներ, հիւրանոցներ, ամառանոցներ ու շոգենաւեր:

Մանթաշեանցի կեանքին հիմնական նպատակը միայն առեւտուրը կամ դրամ դիզելը չէ եղած: Գործարարութեան զուգընթաց, ան կարեւորած է նաեւ ազգօգուտ հասարակական աշխատանքը: Իր հովանաւորութեան տակ էր Կովկասի ամենամեծ որբանոցը, անոր միջոցներով շէնքեր եւ հայկական եկեղեցիներ կառուցուած են Թիֆլիս, Երեւան, Պաքու, Մոսկուա, Փեթերպուրկ եւ Փարիզ: Մենք անոր կը պարտինք Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ գոյութիւնը:

Մանթաշեանցի նիւթական օժանդակութեամբ կառուցուած է Ս. Էջմիածնայ կաթողիկոսական վեհարանը, վերա- նորոգուած են Մցխեթի վրացական տաճարը, Թիֆլիսի Վանքի եկեղեցին, ուր ամփոփուած է անոր մարմինը:

Ալ. Մանթաշեանց եղած է նաեւ հայ մշակոյթի, գիտութեան, արուեստի եւ գրականութեան մեծ նուիրեալ ու հովանաւոր: 1881-էն սկսեալ, իր միջոցներով տարեկան 200 երիտասարդ իրենց բարձրագոյն ուսումը ստացած են Ռուսաստանի եւ Եւրոպայի ուսումնական լաւագոյն հաստատութիւններուն մէջ: Նոյնիսկ մեծն Կոմիտաս անոր շնորհած թոշակով մեկնած է Պերլին, շարունակելու իր ուսումը, եւ անոր կարգադրութեամբ է, որ դաշնամուր ստացած է Գերմանիայէն:

1915-ին, երբ Մանթաշեանցը արդէն չկար, Մարտիրոս Սարեան Փեթերպուրկի մէջ կը կերտէ Մանթաշեանցի որդիին՝ Յովսէփ Մանթաշեանցին դիմանկարը: Ինչպէս իր յուշերուն մէջ նշած է մեծ նկարիչը, աշխատանքի ընթացքին ան յանդիմանած է Յովսէփը, որ հօր մահէն ետք եղբայրներով սկսած են վատնել անոր կուտակած, ստեղծած հարստութիւնը: Այսպէս կ'արդարանայ մեծ բարեգործի որդին. «Մենք եղբայրներով որոշած ենք մեր ծննդավայր Ախթալայի եւ շրջակայ գիւղերուն մէջ դպրոցներ բանալ, բարեգործութիւններ կատարել...»:

Կը պատմեն նաեւ, որ երբ 1920-ականներուն Մարտիրոս Սարեան ցուցահանդէս կազմակերպած էր Փարիզի մէջ, թշուառ երիտասարդ մը կը նկատէ, որ ամէն օր ժամերով կը կենար, կը նայէր Յովսէփ Մանթաշեանցի նկարին ու կ'ուլար: Երբ նկարիչը ի վերջոյ կը հարցնէ անոր վարմունքին պատճառը, ան կ'ըսէ. «Ձիս չե՞ս յիշեր, վարպե՛տ, այս նկարին մէջ ես պատկերուած եմ...»:

Ահա թէ ինչ մնացած էր Մանթաշեանցի 25 միլիոն կարողութենէն...

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 125,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ---------- ----------

Address: ----------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: ----------

Tel :---------- Email: ----------

ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի նախաձեռնութեամբ ու համագործակցութեամբ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) կը յայտարարէ որ «քորոնա» ժահրի ստեղծած տագնապալի վիճակին բերումով կեանքի կոչած ենք յատուկ գրասենեակ մը:

Սոյն գրասենեակը խորհրդատուական ծառայութիւններ պիտի տրամադրէ պետական եւ այլ նպաստներէն օգտուելու կարելիութիւններուն մասին, որպէսզի Հայ քաղաքացիները կարողանան որոշ չափով յաղթահարել տնտեսական դժուարութիւնները:

Խորհրդատուութեան եւ օժանդակութեան համար կարելի է դիմել

հեռաձայնելով հետեւեալ թիւին. 888-908-1887

Կամ. contactus@aebu.org

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

Ուր ալ գտնուին
աշակերտները...

Մեր դասերը եւ մեր սիրտերը
միշտ ձեզի հետ են:

CTA CALIFORNIA TEACHERS ASSOCIATION

cta.org